

2035

Christine  
Key 24-50

20

p-51

03 AUG 2009

# ՄՉԳԵՐՈՒՆ ԲԱՐԵԿԱՄԸ



ԴԱՏԱԻՈՐ ԲԸԹՂԸՐՅՕՐՏԻ  
ԱՇԽԱՐՀԱԾԱԻԱԼ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄԸ

20
Բ-51

2035

20

P-51

**Ժողովուրդներուն Բարեկամը**

**Գրեց՝ Ճ. Ֆ. Բլեթչերֆոլդ**

**Հեղինակին ուրիշ երկասիրութիւններն են՝**

Ազատութիւն,  
Վերջին Օրերը,  
Աստուծոյ Քնարը,  
Ուր են Մեռելները,  
Ժողովուրդին Դրօշակը,  
Եւայն, Եւայն գրքեր:

(“The Peoples Friend” in Armenian)

Copyright 1928 by  
International Bible Students Association  
Brooklyn, N. Y.

MADE IN U. S. A.

Հրատարակիչ՝  
**ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՄԲ. ԳԻՐԲ ՈՒՍԱՆՈՂԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ**  
INTERNATIONAL BIBLE STUDENTS ASSOCIATION  
(Armenian Department)  
117 Adams Street, Brooklyn, N. Y., U. S. A.  
1929

9032



### ԻՐԱԿԱՆ ՊԱՏՃԱՌԸ

ԵՍ ԲՆԱԻ ԲՈՒ՛Է ՉԵՄ ՏԱՐ— ԻՆՉՈ՞Ւ ՏԱՄ.  
ՈՐՈՎ ԷՆՏԵՆԻ ՊԱՐԱՊ ՏԵՂԵ Է:  
ԲԱՂԱԲԱԳԷՏՆԵՐԸ ՈՒ ԿԱՇԱՌՈՂՆԵՐԸ ԵՆ  
ՈՐ ԱՅՍ ԵՐԿՐԻՆ ԿԻՇՈՆԵՆ:

### The Real Reason



ԲԱՂԱԲԱԳԷՏՆԵՐ

ԿԱՇԱՌՈՂՆԵՐ

Վերելի զձազրութիւնը 1928, Մայիս 31-ի Նիւ Եարք Ամերիքըն-ին մէջ Երեւոյաւ: Ամերիքըն-ը Ի վիճակի է Երկրին կացութիւնը գիտնալու: Թէ որ զձազրութիւնը Երկրին իրական կացութիւնը կ'արտայայտէ՝ ուրեմն ո՞վ է աներեւոյթ իշխանը— Եհովա՞ն թէ Սատանան:



23543-59

### ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒՆ ԲԱՐԵԿԱՄԸ

**Ե** ՀՈՎԱՅԻ անունը պիտի՛ պաշտպանուի: Ատոր ժամանակը հասած է այլևս: Նա՛ է ժողովուրդներուն մեծ Բարեկամն ու Բարերարը: Երկար դարերէ ի վեր Բանսարկու Սատանան Եհովա Աստուծոյ մեծ Անունը անպատուած եւ ժողովուրդները Անկէ հեռացուցած է՝ ի վնաս իրենց: Աստուած խոստացաւ թէ պիտի գայ ժամանակ մը՝ երբ Նա ի նպաստ մարդկութեան պիտի ղեկավարէ Երկրիս գործերը եւ աշխարհիս բոլոր ազգերը օրհնէ: Ա՛լ հասած է ժամանակը որ՝ Նա ժողովուրդներուն յայտնէ զանոնք իրենց բռնակալին ձեռքէն ազատելու եւ զիրենք օրհնելու համար Իր ունեցած նպատակը:

Բէտիօն, Եհովա Աստուծոյ զիւտն է: Մարդիկ զայն գործածելու կերպը միայն սորված են: Պիտի գայ ժամանակ մը՝ երբ Եհովա Աստուած Իր հաւատարիմ ներկայացուցիչներուն համար կարելի պիտի ընէ Երուսաղէմի մէջ կանգնիլ եւ յստակ ու լսելի կերպով խօսիլ Երկրիս բոլոր ազգերուն: Ժողովուրդները ուշադրութեամբ մտիկ պիտի ընեն անոնց ու հրճուին:

Մարդկութեան իրական թշնամին Բանսարկու Սատանան է: Նա մարդոց անտեսանելի է, բայց իր ազդեցութիւնը գործածելով մարդոց ընթացքը կը ղեկավարէ: Նա՛ է ժողովուրդին մեծ բռնակալը: Նա շահախնդիր մարդիկը կը ծառայեցնէ որպէս իր գործակալները: Անոր բռնակալ իշխանութիւնը այլևս վերջանալու մօտ է: Եհովա Աստուծոյ նպատակն է այն խնդրոյն շուրջ ժողովուրդին ծանօթութիւն տալ՝ որպէս զի անոնք քաջալերուին եւ հրճուանքով սպասեն այն ժամանակուան՝ երբ պիտի վայելին ազատութիւն, խաղաղութիւն, բարգաւաճութիւն, կեանք եւ Երջանկութիւն:

Ձ-ԵՄԵԸ

Պատշաճ էր որ՝ Նախախնամական թոշտուութեամբ Եհովա Աստուծոյ անունը փառաբանուէր՝ ընտրւոյ կայաններու ամենամեծ շղթայումով մը: Այդպիսի վկայութիւն մը տրուեցաւ՝ Կիրակի օր, Օգոստ. 5, 1928 Միչիկըն-ի Տիթթոյթ քաղաքին մէջ, ուր աշխարհի այլեւայլ կողմերէն Սը. Գիրք Ուսանողներ իրարու քով եկած ըլլալով միջազգային համաժողով մը կ'ունենային: Անոնք Եհովա Աստուծոյ նուիրուած այրեր ու կիներ էին: Բանախօսն էր՝ Միլուքեան Նախագահը: Ուաշինկթընի Փօսթ-ը, Միացեալ Նահանգաց ազգային մայրաքաղաքի առաջնակարգ օրաթերթը, այդ բանախօսութեան մասին հետեւեալ տեղեկագրութիւնը տուաւ յաջորդ առաւօտ.

«100 ԲԵՏԻՕ ԿԱՅԱՆՆԵՐՈՒ ՄԵ. ԳՐՈՑ ՀԱՄԱՐ ՇՂԹԱՅՈՒՄԸ ՆՈՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԸ ՀԱՍՏԱՏԷ

«Տիթթոյթի մէջ Դատաւոր Բըթհըրֆորտի Բանախօսութիւնը Միլիոնաւորներէ Կտուած

«Երէկ առաւօտ՝ Տիթթոյթի մէջ համաժողովի համար իրարու քով եկած Միջազգային Սը. Գիրք Ուսանողաց Միութեան կիրակի առաւօտեան ժողովին ընտրւոյով հետարձակմանը համար, ըստ տրուած հաւաստիքներուն, 100-է աւելի կայաններ զորձածուցան եւ հետեւաբար ընտրոյի պատմութեան մէջ ամենախոշորն էր: Ուաշինկթընէն մտիկ ընողները զայն լսեցին WRHF կայանի միջոցաւ:

«Գլխաւոր խօսողն էր Դատաւոր ձօզէֆ Ֆ. Բըթհըրֆորտ, որ անցելոյն Մըզուրիի մէջ փաստաբան էր, բայց յետոյ աւետարանական քարոզիչ եւ Միջազգային Սը. Գիրք Ուսանողաց Միութեան Նախագահ եղաւ:

«Դատաւոր Բըթհըրֆորտ իր բանախօսութեան ընթացքին ըսաւ. «Նիւ Եսթի օրաթերթերուն մէկէն հետագիւր մը ստացայ՝ որ կ'ուզէր գիտնալ թէ ինչ էր այս շղթայումին ծախսը եւ թէ ով էր այդ ծախսը վճարողը:

«Պատասխանեցի թէ \$50,000-ի (յիսուն հազար տալէրի) ծախս եղած է եւ թէ այդ գումարը վճարողներն են՝ Միացեալ Նահանգաց մէջ գտնուող բազմաթիւ Քրիստոնեաներ որոնք ուրախ են այդ ծախսը վճարելու: Ուրիշ առթիւ մը Դատաւորը միջանկեալ կերպով ըսաւ. «Բանասրկու Սատանան ջանաց այս շղթայումը արգիլել բայց կարող չեղաւ»:

«Բանախօսութիւնը հեռարձակող կայաններուն մէջ էին՝ 5,000 Ուսթ զօրութեամբ WORD, Պաթալիա, Իւլ. -ի մէջ, Շիքակոյի մօտ, եւ WBBR Բօստօն, Ն. Ե. -ի մէջ, Նիւ Եորք քաղաքէն դուրս, որոնց երկուքն ալ Դատաւոր Բըթհըրֆորտի կազմակերպութեան սեփականութիւնն են:

«ԻՐ ՏԵՍԱԿԻՆ ՄԷՋ ԱՌԱՋԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄԸ

«Հեռարձակման համար առտուան ժամը 9:30-ը որդուած էր, որպէս զի կիրակի առաւօտ հեռարձակուած կրօնական առարողութեանց հետ ընդհարում չունենայ, այդպէս առաջին աշխարհածաւալ հեռարձակումն էր որ տեղի ունեցաւ այդ անսովոր ժամուան մէջ:

«Ըտուեցաւ թէ բանախօսութիւնը կը լսուէր Ամերիկայի 36 նահանգներու եւ Գանատայի երեք կուսակալութիւններու մէջ, եւ Սըքնէթթըտի WGY կայանէն կարճ ալիքներու միջոցաւ արտասահման կը զրկուէր:

«Այս շղթայումը շատ աւելի ընդարձակածաւալ կերպով տարածուեցաւ քան Լինտպըրկի համար շղթայումը 50 կայանները, կամ 68 շղթայումը կայաններէ հեռարձակուած ազգային (Ամերիկայի քաղաքական կուսակցութեանց) համախմբումները, որոնց ոչ մէկը Գանատա հասաւ, կամ Հուվըրի (Նախահահական ընտրելի) զեկուցման համար առաջադրուած շղթայումը՝ որ առ այժմ 75 կայաններէ կը բաղկանայ:

«Մայրաքաղաքին (Ուաշինկթըն) մէջ մտիկ ընողներուն դիւրութեանը համար՝ Փիթհիլըն Թէմփըլ Օտիթօրիքմ-ի եւ քաղաքին մի քանի ուրիշ վայրերու մէջ ձայնատու փողեր (լաւտ սփիքըս) դրուած էին:

«Ըստ ընտրոյի միջոցաւ մեզի հասած ծանուցման՝ Տիթթոյթի Բարբիքմ-ի մէջ Դատաւոր Բըթհըրֆորտը ողջունող տեսանելի ունկնդիրներու թիւը 12,000 հոգիէն աւելի էր: Ատիէ դատ, Տիթթոյթէն 10 մղոն հեռու գտնուող Պէլ Ալլ Փարք-ին մէջ ալ ձայնատու փողեր դրուած էին, ուր, ըսուեցաւ թէ, ուրիշ բազմութիւն մը համախմբուած էր»:

Բանախօսութեան ջիւղ վերջ՝ հարիւրաւոր հեռագիրներն ու հազարաւոր նամակներ սկսան գալ, որոնցմով կը յայտնուէր թէ բանախօսութիւնը թէ՛ Ամերիկայի ամէն մասերուն եւ թէ՛ արտասահմանի մէջ յստակ եւ որոշ կերպով լսուած էր: Բանախօսութեան օրինակին համար պահանջը խիստ մեծ էր. ուստի այդ յիշատակելի յայտարարութիւնն ու բանախօսութիւնը Հայերէնի ալ թարգմանելով այս

զբքոյկը պատրաստեցինք մեր խոհուն ազգայիններու օգտին համար:

Օգոստոս 5-ի կիրակի առաւօտեան ժամը ճիշդ 9:30-ին յայտագիրը սկսաւ Տիթրոյթ, Միշիկընի Քալիսիըմ-ի մէջ հաւաքուած 12,000 տեսանելի ունկնդիրներու ներկայութեան, եւ նոյն ատեն ան հետարձակուեցաւ Միացեալ Նահանգաց ու Գանատայի մէջ գտնուող 107 տարբեր ըէտիօ կայաններու միջոցաւ, եւ լսուեցաւ անտեսանելի հսկայ բազմութեան մը կողմէ:

Բանախօսը՝ Դատաւոր Րըթհըրֆորտ, բեմ ներկայացուած պահուն ըսաւ. «Իմ բանախօսութեանս սկսելէ առաջ՝ որոշմագրի ձեւով Յայտարարութիւն մը պիտի կարդամ, անոր ընդունուելը պիտի առաջարկեմ եւ ապա որոշմագրին մասին պիտի խօսիմ»: Բանախօսութիւնը մէկ ժամ եւ հինգ վայրկեան տեւեց, որմէ վերջ հսկայ բազմութիւնը աղաղակով մը ոտքի ելլելով միաձայն քուէով որոշմագիրը ընդունեց, որ հետեւեալն է.

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԵՄ ՍՍՏԱՆԱՅԻ  
ԵՒ Ի ՆՊԱՍՏ ԵՀՈՎԱՅԻ**

Միջազգային համաժողովի համար իրարու քով եկած Սբ. Գիրք Ուսանողները՝ ինքզինքնին ընդդէմ Սատանայի եւ բացարձակապէս ի նպաստ զօրաց Եհովայի կը յայտարարեն, եւ նոյն ատեն զօրաւոր համոզումով մը կը ծանուցանեն հետեւեալ ճշմարտութիւնները.

Առաջին. — Թէ՛ կտաւարական զանազան ձեւերով կազմակերպուած եւ գերիվեր ու աներոյթ իշխանի մը տիրապետութեան տակ գտնուած երկրիս ժողովուրդները կը կազմեն աշխարհը.

Երկրորդ. — Թէ՛ Եհովան է միակ ճշմարիտ ու Ամենակարող Աստուածը եւ ամէն արդար իշխանութեան աղբիւրը. Թէ՛ Նա է Յաւիտենական Թագաւորը, իմաստութեան, արդարութեան, սիրոյ եւ զօ-

րութեան Աստուածը եւ բոլոր արարածներու ճշմարիտ բարեկամն ու բարերարը.

Երրորդ. — Թէ՛ Եհովան Իր Արուեսակ որդւոյն իշխանութիւն տուաւ մարդուն հսկին ըլլալու. Թէ՛ Արուեսակ անհաւատարիմ գտնուեցաւ, Աստուծոյ դէմ ապստամբեցաւ եւ պատճառ եղաւ մարդուն արդարութենէ էյնալուն, եւ այդ ապստամբութենէն յետոյ Արուեսակը կը ճանչցուի՝ Վիշապ, Օձ, Սատանայ եւ Բանասրկու անուններով. Թէ՛ Բանասրկու Սատանան աղգերուն մէջ կոխ յառաջ բերած է եւ պատասխանատուն է բոլոր անխիղճ պատերազմներուն, անզգամ մարդասպանութիւններուն, ամէն սոսկալի ռճրագործութիւններուն եւ պիղծ արարքներուն. Թէ՛ մինչեւ հիմա Եհովա՝ արգելած է՛ր Սատանան մարդոց վրայ զօրութիւն ու աղքեցութիւն գործածելէ, այն նպատակաւ որ մարդիկ չարագործութեան անիծապարտ հետեւանքը զգան. Թէ՛ բազմաթիւ դարերով Սատանան աշխարհի աներեւոյթ իշխանը եղած, Եհովա Աստուծոյ անունը շարունակաբար անպատուած եւ մարդոց ու ազգերու ահագին վնասներ հասցուցած է.

Չորրորդ. — Թէ՛ Եհովան խոստացած է որոշեալ ատենին Սատանան կաշկանդել եւ երկրիս վրայ արդարադատ կառավարութիւն մը հաստատել՝ որպէս զի մարդիկ յաւիտեան երջանկօրէն ապրելու պատեհութիւնը ունենան. եւ այդ բանին համար Նա Իր սիրելի Որդին՝ Յիսուսը օծեց որ աշխարհի փերկէնը եւ աներեւոյթ իշխանը ըլլայ.

Հինգերորդ. — Թէ՛ հասած է ժամանակը որ Եհովան Իր խոստումը իրականացնէ եւ բոլոր արարածներուն մտքին մէջ Իր անունը վրայ բերուած անարդանքը մաքրէ. Թէ՛ Քրիստոս Յիսուս իբրև Եհովայի գործադիրը՝ Իր բարձր պաշտօնին զլուխը անցած է, եւ ներկայի մեծ հարցն է՝ Ո՞վ է Աստուած եւ ո՞վ պիտի տիրէ մարդոց ու ազգերուն վրայ.

վեցերորդ. — Թէ՛ որովհետեւ Սատանան պիտի չհրաժարի երկրիս ազգերուն ու ժողովուրդներուն վրայ ունեցած իր ամբարիշտ իշխանութենէն՝ զօրաց Եհովան իր օծեալ դործադիր պաշտօնէին՝ Քրիստոս Յիսուսի հետ միասին կռիւ պիտի մղէ Սատանային ու անոր բոլոր չար ուժերուն դէմ, եւ ասկէ վերջ մեր մարտակոչը (պէթըլ քրայ) պիտի ըլլայ՝ ԵՀՈՎԱՅԻ ԵՒ ԱՆՈՐ ՕԾԵԱԼԻՆ ՍՈՒՐԸ. Թէ՛ մօտ ատենէն սկսելիք Արմազեդոնի պատերազմով Սատանան բոլորովին պիտի կաշկանդուի եւ անոր վատ կազմակերպութիւնը հիմնայատակ կերպով պիտի կործանուի, եւ թէ՛ Եհովան, Քրիստոս նոր իշխանին միջոցաւ երկրիս վրայ արդարութիւն պիտի հաստատէ, մարդկութիւնը բոլոր չարիքէ պիտի ազատէ եւ աշխարհիս բոլոր ազգերուն մշտնջենական օրհնութիւններ պիտի պարգևէ.

Եօթներորդ. — Հետեւաբար՝ հասած է ժամանակը որ բոլոր արդարասէրները Եհովայի կողմը անցնին, Անոր հնազանդին ու ծառայեն մաքուր սրբտով, որպէս զի ստանան այն անսահման օրհնութիւնները՝ զորոնք Ամենակալ Աստուած իրենց համար պահած է:

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԻՇԽԱՆԸ

«Երանի՛ այն ազգին՝ որուն Աստուածը Եհովան է» — Սաղմոսաց ԼԳ. 12:

Քիչ առաջ ձեր ականջներուն կարդացուած Յայտարարութեան խօսքերը ճշմարիտ են: Անոնք ճշմարիտ ըլլալով՝ խիստ մեծ կարեւորութիւն ունին ներկայիս ապրող ժողովուրդներուն համար: Իմ տեսանելի եւ անտեսանելի ունկնդիրներէս կը խնդրեմ որ համբերութեամբ մտիկ ընեն՝ երբ ատոնց ի նպատակ ապացոյց կը ներկայացնեմ: Ես այն հաստատ վստահութիւնը ունիմ թէ՛ երբ մարդիկ ճշմարտութիւնը դիտնան ու գնահատեն՝ իրենց մտքերէն մեծ ծանրութիւն մը պիտի վերնայ: Իմ փա-

փաքս այն է որ՝ ճշմարտութիւնը ժողովուրդին ներկայացնելուն մէջ պատեհութիւն մը եւ բաժին մը ունենամ: Այդ նպատակաւ՝ ձեր առջեւ կ'ըլլեմ իբրեւ բոլոր մարդկութեան մէկ բարեկամը: Ես յազնցնելիք շահախնդրական նպատակ մը չունիմ, միայն թէ՛ այն բանը որ մարդկութեան ընդհանուր բարօրութեանը համար է՝ իմ ալ օգտիս համար ըլլալու է: Մարդոց յաւիտենական բարօրութիւնը շատ աւելի մեծ արժէք ունի՝ քան այն բոլոր դրամները՝ որոնցմով երկրիս ապրանքները կը գնուին:

Բոլոր ժողովուրդներուն բարեկեցութեանը համար անհրաժեշտ է բարւոք կառավարութիւնը: Ամէն այր ու կին ատով պէտք է մեծապէս հետաքրքրուի: Ծնողքները պարտին իրենց զաւակաց ուսուցանել բարւոք կառավարութեան սկզբունքները: Այս նիւթին ուսումնասիրութեանը մէջ իրական յառաջգիմութիւն չենք կրնար ունենալ՝ թէ՛ որ հանդարտ եւ անհատկապաշար մտքով չմօտենանք խնդրոյն:

Մարդկային բոլոր կառավարութիւններուն մէջ՝ բարիի կամ չարի համար դործածուած տեսանելի, ինչպէս նաեւ անտեսանելի զօրութիւններ կան: Անտեսանելի զօրութիւնը տեսանելիէն դերիվեր է, եւ հետեւաբար իշխող զօրութիւնն է: Եթէ ան չար է, այն ժամանակ այդ կերպ դործածուած անտեսանելի զօրութիւնը տեսանելին անգոհացուցիչ կը դարձնէ: Եթէ անտեսանելի զօրութիւնը բարիի համար կը դործածուի՝ այն ատեն տեսանելի զօրութեան վրայ բարի ազդեցութիւն կ'ընէ ու մարդիկ կ'օրհնուին:

ԱՇԽԱՐՀ

Աշխարհը՝ այլազան ազգերէ ու ժողովուրդներէ կազմուած հսկայ կառավարութիւն մըն է: Բոլոր ազգաց մէջ ժողովուրդները ճանչցած են ազգերու ընթացքը ղեկավարող անտեսանելի զօրութիւն մը: Երբ ժողովուրդները խիստ տաղնալի մէջ են՝ իրենց անտեսանելի զօրութեան դիմում կ'ընեն, այդպէս

խոստովանելով թէ անտեսանելի գերիվեր է իրենց տեսանելի կառավարիչներէն: Հոս ըստածներուն համաձայն Ս. Գրոց մէջ գրուած է. «Երանի՛ այն այն ազգին՝ որուն Աստուածը (անտեսանելի իշխանը) Եհովան է»— Սաղմոսաց ԼԳ. 3:

Ս. Գրոց այս խօսքէն այն կորակացութեան պարտինք դալ թէ՛ Եհովա Աստուծոմէ զատ ուրիշ իշխող անտեսանելի զօրութիւն մը կայ, եւ թէ՛ երբ մարդիկ այդ զօրութեամբը կը կառավարուին՝ ատիկա իրենց օրհնարքեր չէ:

Բոլոր ազգերն ալ կ'ըմբռնեն տեսանելի կառավարիչի մը անհրաժեշտութիւնը: Մեր այս ըսածին ապացոյց է այն իրողութիւնը թէ՛ Միացեալ Նահանգները ներկայիս (1928-ի նախագահական ընտրութեան առթիւ) զօրաւոր պայքար մը կը մղեն վճռելու թէ ո՛վ պիտի ըլլայ իրենց կառավարիչը: Անհրաժեշտ կը սեպեն տեսանելի կառավարիչին մասին ծանօթութիւն ունենալ, եւ այդ նպատակաւ ալ դատարարակցական պայքար մը կը մղեն: Անտեսանելի կառավարիչին մասին ծանօթութիւն ունենալը շատ աւելի կարեւոր է, ինչու որ անոր ազդեցութիւնն ու զօրութիւնը տեսանելիներէն աւելի մեծ է:

Ես այն համոզումը ունիմ թէ՛ երկրիս ժողովրդային հսկայ զանգուածները, հոգ չէ թէ ինչ կրօնքի կամ քաղաքականութեան ալ հետեւին, կը փափաքին ունենալ եւ վայելել արդար եւ իրաւարար կառավարութիւն մը: Նկատելով որ մարդը անկատար է, եւ թէ իր վրայ ազդեցութիւն բանեցնող անտեսանելի զօրութիւն մը կայ, կենսական է որ ստուգենք թէ՛ որո՛ւնն է արդար զօրութիւնը եւ թէ ո՛վ է որ չար ու անարդար զօրութիւն կը դործածէ: Երբ այս խնդիրը կը հետազօտենք՝ մենք բնաւ տրամադրութիւն չունինք մարդիկ նախատելու: Ս. Գիրք Ուսանողներու փափաքը չէ ունէ մարդու կամ մարդկային խումբի մը դէմ կռիւ մղել: Անոնց փափաքն է ճշմարտութիւնը բացորոշապէս ժողովուրդին

մտքին ներկայացնել: Երբ ճշմարտութիւնը հասկցուի՝ պիտի տեսնուի որ բոլոր մարդոց շահերն ալ համանման են: Այժմ յառաջ կ'անցնիմ ապացուցանելու թէ՛ աշխարհի վրայ տիրող չար աստուած մը կայ. թէ՛ արդարութեան Ամենակալ Աստուած Եհովան մօտ ատենէն պիտի կործանէ չար աստուծոյն զօրութիւնը, ու երկրիս վրայ պիտի հաստատէ արդարադատ կառավարութիւն մը՝ որ մարդիկը իրենց բեռներէն պիտի ազատէ եւ յաւիտենական օրհնութիւններ ընծայէ անոնց. եւ թէ՛ ներկայիս դարձակէտային ժամանակի մը մէջ կ'ապրինք ու ունէ ժամանակէ աւելի մեծ հարց մը կայ ժողովուրդին առջև:

### Ե Հ Ո Վ Ա

Ո՞վ է աշխարհիս ազգերուն անտեսանելի իշխանը: Եհովան է թէ՛ ուրիշ մէկը: Եհովան է ճշմարտ Աստուածը: Անոր նկատմամբ Յիսուս յայտարարեց թէ՛ զԱնիկա ճանչնալը յաւիտենական կեանք կը նշանակէ: Նա՛ է մեծ Յաւիտենականը, կրկինքն ու երկիրը ստեղծողը, եւ ամէն բարեաց Պարգեւիչը (Եսայ. ԽԲ. 5): Երբ Աստուած Իսրայէլը Իրեն ժողովուրդը ընտրած էր՝ Եհովան անոնց համար ազգային անուն մըն էր: Բայց Անոր անունը ատկէց ալ աւելին կը նշանակէ: Ստեղծագործութեան նկատմամբ ունեցած Իր նպատակը կը նշանակէ ան: Անոր Ծօքը, Աստուածաշունչը, երեւան կը բերէ Անոր նպատակը. հետեւաբար Աստուածաշունչը մեզի իրաւասութիւն կուտայ այդ կորակացութեան գալու: Անիկա արդար եւ իրաւարար է: Անոր «դատաստանները ճշմարիտ ու բոլորովին արդար են» (Սաղմ. ԺԹ. 9): «Քանզի Եհովան արդար է. նա արդարութիւնը կը սիրէ» (Սաղմ. ԺԱ. 7—Անդլ. Ռիվայգտ Վըրթըն): Անոր արդարութիւնը հրգոր լեռներուն անխախտութեանը նմանցուած եւ



ըսուած է թէ Անոր իրաւարարութիւնը անյատակ ծովուն խորութենէն ալ աւելի է— Եսայ. ԼԶ. 6:

Եհովան այնքան իմաստուն է որ՝ Իրեն համար երբէք կարելի չէ սխալ գործել: Աշխարհիս ամենա- իմաստուն մարդոց իմաստութիւնը յիմարութիւն է երբ զայն Եհովա Աստուծոյ իմաստութեան հետ կը բաղդատենք (Ա. Կորնթ. Ա. 25): Մարգարէն Անոր ստեղծագործութեան մասին գրեց. «Ով Տէր, ո՞ր- չափ շատ են քու գործերդ. անոնց բոլորը իմաս- տութիւնով ըրիր» (Սաղմ. ճԴ. 24): Նա իմաստու- թեամբ ստեղծեց մարդը, եւ Անոր իմաստութիւնը պատրաստեց այն ծրագիրը՝ որով մարդը փորձա- ոութեամբ կը սորվի իր դասը եւ հնազանդները մըշ- անջնեական օրհնութիւն պիտի ստանան:

Եհովան է բոլոր զօրութեանց աղբ: Բոլոր ու- րիշներ Եհովայի թոյլտուութեամբն է որ կը գոր- ծածնն իրենց զօրութիւնը: Երկրիս բոլոր ազգերուն ամբողջ զօրութիւնը զոյլի ջուրին կաթիլին կամ կշիռքին փոքրիկ փոշին պէս է՝ բաղդատմամբ Ե- հովա Աստուծոյ զօրութեանը (Եսայ. Խ. 15-22): Նա ամենակարող Աստուածն է, որ կը նշանակէ թէ Անոր զօրութիւնը սահման չունի (Մենդ. ԺԷ. 1-6): Երբ նա բան մը կատարել ուզէ՝ ատիկա կը նշանակէ թէ այդ բանը պիտի կատարուի: Երբ նա ուզեց որ երկիրը եւ անոր վերաբերեալ բաները ստեղծուին՝ Իր հողին տարրերուն վրայ շարժեցաւ, եւ յառաջ եկան երկիրն ու անոր վրայի կենդանի արարածները (Մենդոց Ա. 1-26): Իր հողին՝ մարդոց անտեսանելի Իր զօրութիւնն է:

Եհովա Աստուած սէր է, որ կը նշանակէ թէ Ա- նոր ըրած կամ ընելիք ոեւէ բան անհասխիտիւր շար- ժառիթով է: Նա ինքնապարփակ է եւ բանի մը կա- բօտ չէ, եւ ոեւէ մէկ մը չկրնար Անոր օգուտ մը բե- բել: Նա Իր բոլոր գործերը Իր արարածներուն օգ- տին համար է որ կը կատարէ: Իր մարգարէն՝ որ զինքը ճանչցեր էր՝ բացազանչեց. «Ով Աստուած,

ի՛նչ գերազանց է քու զթութիւնդ, որ մարդոց որ- դիները քու թուերուդ հովանաւորութեանը կ'ապա- շինին» (Սաղմ. ԼԶ. 7): «Որովհետեւ քու ողորմու- թիւնդ կեանքէն ազէկ է, իմ շրթունքներս քեզ պիտի զովեն»— Սաղմ. ԿԳ. 3:

Իմ ուշադրութենէս չէ վրիպած այն իրողու- թիւնը թէ՛ Եհովան շարունակաբար իբրեւ անիրաւ եւ անխիղճ մէկը ամբաստանուած է: Բայց երբ կը տեղեկանանք թէ թշնամին է որ այդ ամբաստանու- թիւնն ըրած ու մարդոց մտքին վրայ տպաւորած է՝ այն ատեն կ'ըմբռնենք թէ ամբաստանութիւնները անիրաւ են (Յովհ. Ը. 44): Եհովայի մէջ կը բնակի արդարութիւն, իմաստութիւն, զօրութիւն ու սէր, որոնց բոլորը միասնաբար կատարեալ ներդաշնա- կութեամբ կը գործեն միշտ Իր արարածներուն բա- րեքը նկատի ունենալով: Այդ պատճառաւ գրուած է. «Երանի՛ այն ազգին՝ որուն Աստուածը Եհովան է»: Այդ խօսքին հակադարձն ալ պարտի ճշմարիտ ըլլալ. հետեւաբար՝ ոեւէ ազգ իրական օրհնութիւն չկրնար ստանալ եթէ Եհովան իր Աստուածը չէ:

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԲԱՅԱԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Ազգ մը օրհնուած ըլլալու համար՝ պէտք է խա- ղադութիւն ունենայ, ազատ ըլլայ բռնակալութենէ եւ ատոր նկատմամբ ահ ու դողի մէջ չըլլայ. մար- դիկ պէտք է ապահով ըլլան իրենց ստացուածքին վրայ, իրենց տանը մէջ եւ իրենց մարմիններուն նը- կատմամբ. այդ ազգին օրէնքները պէտք է որ բո- լորին բարօրութեանը համար ի գործ դրուին հա- ւասարապէս, առանց մասնաւոր շնորհներ ընծայե- լու ոեւէ մէկուն. եւ մարդիկ պէտք է որ բարգաւա- ճութիւն վայելն իրենց նիւթական եւ հողեւոր գոր- ծերուն մէջ: Կա՞յ ներկայիս երկրի վրայ մարդ մը՝ որ իր յիշողութեանը ապաւինելով կարենայ մատ- նանիչ ընել ազգ մը որ իրական օրհնութիւն ունեցած ըլլայ: Ես վստահ եմ որ այդպիսի մէկը չգտնուիր:

Ասոր ալ պատճառը կայ: Կ'ուզեմ շնորհակալ լինել իմ նպատակս չէ որևէ մէկը նախատանաց ենթարկել: Իմ միակ փափաքս է իրողութիւնները իրենց իսկութեամբը ներկայացնել, որպէս զի կարենանք անկեղծ ու արդար կերպով վճռել թէ երկար ատենէ ի վեր ո՞վ եղած է եւ տակաւին է՝ այս աշխարհիս աներեւոյթ աստուածը կամ իշխանը:

Ինչպէ՞ս կրնանք վճռել թէ այսինչ ժամանակաշրջանին մարդուն աներեւոյթ իշխանը ո՞վ եղած է: Այդ բանը ընելու ամենէն ապահով կերպն է Յիսուսի հաստատած կանոնին հետեւիլ, թէ՛ «Ձանոնք իրենց պտուղէն պիտի ճանչնաք»: Երբ ազգ մը կամ կառավարութիւն մը անարդարութիւն ի գործ կը դնէ, սակաւթիւ անհատներու անտելի կերպով շնորհ ցոյց կուտայ ու մեծամասնութիւնը անդթօրէն կը ճնշէ՝ ի հարկէ ոչ մէկ ուղղամիտ մարդ կրնայ ըսել թէ այդ ազգը արդար է: Երբ տեսանելի իշխանութիւնը մի քանիներու կողմէ ի գործ կը դրուի՝ ի վնաս մեծամասնութեան, այդ ընթացքը երեւան կը բերէ իմաստութեան ու սիրոյ մեծ պակասը: Երբ անցեալ 2,500 տարուան շրջանի ազգաց պատմութեան վրայ յետադարձ ակնարկ մը կը նետենք՝ չուտով պիտի կրնանք խոստովանիլ թէ՛ այդ ժամանակի տեւողութեան՝ իշխանութեան տակ եղած ժողովուրդները բիրտ անարդարութեան եւ ահագին բռնաճնշումի ենթակայ եղած են: Այդ ժամանակաշրջանին՝ ոչ մէկ իշխող ետին թողած է խնայական արձանագրութիւն մը: Արդեօք իշխողներուն կամաւորապէս անարդար ըլլալուն համար է՝ որ այդ թշուառ կացութիւնը գոյութիւն ունեցած է իր վատ հետեւանքներով միասին: Ես վստահ եմ որ ատիկա չէ պատճառը: Ընդհակառակը՝ իրողութիւնները ցոյց կուտան թէ շատ մը իշխողներ աշխարհօրէն ջանացած են արդար եւ իմաստուն կառավարութիւն մը հաստատել, եւ տաժանելի ջանքերէ վերջ ողբալիօրէն ձախողած են: Շատ մը իշխաններ իրենց կեանքերը զոհած են՝ որի ի բռին աշխատելով ժողովուրդին վիճակը բարելաւել ու չեն յաջողած: Անոնց անկեղծութեանը վրայ չենք կրնար տարակուսիլ:

Նեսանելի իշխաններուն վրայ այդ վատ եւ հզոր ազդեցութիւնը ի գործ դրած է աներեւոյթ իշխանը: Բայց ո՞վ է ան: Աստուծոյ Խօսքը կուտայ ուղիղ պատասխանը թէ՛ ազգերուն վրայ տիրող աներեւոյթ իշխանը եղած է եւ տակաւին ալ է՝ այն աւագ չար էակը, Բանասրկու Սատանան:

**ՉԱՐ ԱՍՏՈՒԱԾԸ**

Երբ մարդը եղեմի, Եհովայի պարտէզին, մէջ կը քալէր՝ կատարեալ էր յօրինուածքով: Եհովան իր Արուեսակ որդւոյն զօրութիւն ու իշխանութիւն տուաւ մարդուն գերիշխանը ըլլալու: Արուեսակ այն ժամանակ կատարեալ ու փառահեղ էակ մըն էր: Արուեսակն ու Լօղոսն էին այն երկու «առաւօտեան աստղերը» որոնք երկրիս հիմերուն դրուած ժամանակ միասին սաղմոսերգութիւն մ'ըրին (Եգեկիէլի ԻԸ. 14-17, Յորայ ԼԸ. 7): Մարդուն բնութեանը մէջ Եհովա Աստուծոյ պաշտամունք մատուցանելու հակումը կար: Արուեսակ ուղեց որ այդ պաշտամունքը իրեն մատուցուի: Նա Աստուծոյ դէմ ապրտամբեցաւ՝ իր այդ փառասիրութեան յագուրդ տալու համար մարդը Աստուծոյ օրէնքին դէմ անհնազանդութեան մղելով (Եսայ. ԺԴ. 11-14): Այդ վատ արարքը ահագին նախճիրներ պատճառած է մարդկային ազգին:

Ատիկ վերջ մարդը մահուան դատապարտուելով իր դրախտային տունէն վտարուեցաւ, եւ ամբողջ մարդկութիւնը ատոր հետեւանքն է որ կ'զգայ մինչ

Ռ-ԵՄՇԸԸ

23543-59



չև հիմա (Մննդոց Գ. 3-24, Հոովմ. Ե. 12): Ազգերուն զգացած այդ չար հետեանքին մասին մարգարէն սաղէս կը խօսի. «Ով առտուանց ծագող Արուեսակ, ի՛նչպէս երկինքէն ինկար ու մինչև գետին կործանեցար, դուն որ աղբերը նկուն կ'ընէիր» — Եսայեայ ԺԳ. 12:

Արուեսակ այլևս դադրելով լուսոյ հրեշտակ մ'ըլլալէ՝ խաւարի եւ չարութեան բուն մարմնացումը դարձաւ, եւ անկէջ ի վեր Աստուածաշունչը անոր Սատանա, Օձ, Վիշապ եւ Բանսարկու անունները կուտայ: Ժողովուրդներու միջև մղուած բոլոր անիրաւ պատերազմները, եւ մարդոց կողմէ կատարուած բոլոր անխիղճ սպանութիւնները, տեղի ունեցած են Բանսարկու Սատանային չար ազդեցութեամբը, ինչու որ նա էր առաջին մարդասպանը եւ ստութեանց հայրը (Յովհ. Ը. 44): Բոլոր անիրաւուածներուն եւ անգթօրէն ճնշուածներուն թախած դառն արցունքներուն պատճառը՝ պէտք է որ Սատանային ազդեցութեանը վերագրենք, ինչու որ նա է ամենամեծ եւ ամենէն անզգամ բռնակալը (Սաղմ. 2Բ. 4): Քրիստոնէութիւն դաւանող մարդոց միջև գոյութիւն ունեցած եւ ցուցադրուած բոլոր դառնասրտութեանց, եւ Քրիստոնեաներու արտայայտած կրօնական աններողամտութեանց եւ յառաջ տարած հալածանաց պատասխանատուն Սատանան պէտք է նկատենք: Եհովա Աստուծոյ դէմ կատարուած բոլոր չարոզի զրպարտութեանց եւ Անոր սուրբ անուանը վրայ բերուած բոլոր նախատանաց պատճառը պէտք է Բանսարկու Սատանան համարենք:

### ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ներկայիս բոլոր ազգերու ժողովուրդները աղազակ կը բարձրացնեն անարդարութեան դէմ: Ես կ'ընդունիմ թէ՛ կառավարութիւններու կողմէ ցուցադրուած գլխաւոր անարդարութեանց պատասխա-

նատուն՝ պաշտօնի վրայ եղող մարդիկը չենք կրնար նկատել: Անարդարութեան եւ բռնապետութեան առաջնորդող անտեսանելի զօրութիւն մը կայ. եւ այդ զօրութիւնը ի գործ դնողն է Բանսարկու Սատանան, որ այս աշխարհի աստուածը կամ անբերելոյթ իշխանն է: Հազար ինը հարիւր տարի առաջ կատարեալ մարդ Յիսուսը երկրի վրայ կը գտնուէր: Նա եկած էր Իր Հայր Եհովա Աստուածը ներկայացնելու եւ Անոր կամքը կատարելու համար (Յովհաննու Ե. 30): Երեք ու կէս տարի Յիսուս ենթարկուեցաւ ամենէն անգութ հալածանաց, որոնք Իր նախատալի մահուամբը իրենց զագաթնակէտին հասան: Հասարակ ժողովուրդը ատեն մը Իրեն ուրախութեամբ մտիկ ըրաւ եւ իբրեւ Փրկիչ ողջունեց զԱնիկա: Յետոյ Փարիսեցիներն ու իշխանները ժողովուրդը Անոր դէմ զրգուեցին, որոնք Անոր դէմ զարձան, եւ Հռովմէական կառավարութիւնը տեղի տալով Անոր մահացմանը համար ժողովուրդին ըրած աղաղակներուն՝ Յիսուս խաչը հանուեցաւ: Արդեօք Փարիսեցիներն ու իշխաններն էին Յիսուսի մահուանը համար ամբողջովին մեղադրելիները: Ճիշդ է թէ Անոր սպանութեան անիրաւ արարքին մէջ անոնք մեղսակիցներ էին, սակայն Պետրոս Առաքեալ՝ ներչնչմամբ ըսաւ անոնց մասին, ինչպէս որ գրուած է Գործք Գ. 17-ին մէջ. «Եւ հիմա, եղբայրներ, գիտեմ որ չգիտնալով ըրիք, ինչպէս ձեր իշխաններն ալ»:

Ո՞վ էր պատասխանատուն եւ ո՞վ էր որ տեսանելի իշխաններն ու Փարիսեցիները իսկապէս արգիլեց ճշմարտութիւնը գիտնալէն եւ հասկնալէն: Յիսուս ըսաւ թէ ատիկա Բանսարկու Սատանան էր, ինչու որ անոնք անոր ազդեցութեանը տեղի տալով անոր կամքն է որ կը կատարէին (Մատթէոսի ԻԳ. 14-16, Յովհ. Ը. 42-44): Աւելի եւս, Բ. Կորնթացի Գ. 3, 4 համարներուն մէջ յայտնապէս ըսուած է թէ այս աշխարհի աստուածը Բանսարկու Սատանան

է, որ մարդոց միտքերը կը կուրացնէ որ չըլլայ թէ ճշմարտութիւնը անոնց միտքերուն վրայ ծագի:

Բանասարկու Սատանան՝ ջանաց համոզել Յիսուս որ Եհովայի հետ ըրած Իր ուխտը ոտքի տակ առնէ եւ այդպէսով Ինքզինքը մահուան ենթարկէ: Այդ ջանքին մէջ ձախողելէ վերջ իսկ՝ նա Յիսուսի դէմ հակառակելէ չդադրեցաւ: «Ու երբ Սատանան ամէն փորձութիւնը կատարեց, ատեն մը ետ կեցաւ անկէ» (Յիսուսէ) — Դուկ. Գ. 1-13:

Ժամանակէ ժամանակ Հրեաները ջանացին Յիսուսը սպանել, եւ ամէն անգամին ալ՝ Բանասարկու Սատանային ազդեցութեան տակ էր որ կը գործէին: Յիսուս այլեւս Իր երկրային պանդխտութեան վախճանին մօտեցած ըլլալով՝ ըսաւ Իր աշակերտներուն. «Ա՛յ ձեզի հետ շատ պիտի չխօսիմ, վասն զի այս աշխարհին իշխանը կուգայ, եւ իմ վրաս բան մը չունի» (Յովհ. ԺԳ. 30): Ատկէ քիչ վերջ՝ Յուդան Յիսուսը Իր սպանիչներուն ձեռքը մատնեց. եւ Յուդան այդ արարքին մողող պատասխանատու անձին մասին գրուած է. «Եւ քահանայապետները ու դպիրները կը փնտռէին թէ ինչպէս սպաննեն զանիկա, քանզի ժողովուրդէն կը վախնային: Եւ Սատանան՝ Իսկարիովտացի մականունեալ Յուդայի ներսը մտաւ, որ տասներկուքին համբանքէն էր» (Դուկասու ԻԲ. 2, 3): «Ու պատահէն ետքը Սատանան անոր ներսը մտաւ: Ու Յիսուս ըսաւ անոր, Ինչ որ պիտի ընես՝ շուտով ըրէ» — Յովհ. ԺԳ. 27:

Ուստի վճռական ապացոյց ունինք թէ՛ այս աշխարհի աներեւոյթ իշխանը՝ Սատանան էր որ Յիսուսի մահուան պատճառ եղաւ: Այդպիսի անդգամ հալածանք մը Եհովա Աստուծմէ չէր կրնար գալ ընդդէմ Իր Որդւոյն: Այդ օրէն ի վեր՝ ճշմարիտ Քրիստոնեաները բուն հալածանաց ենթակա եղած են: Յիսուսի գրեթէ բոլոր առաքեալները չարչար մահուամբ սպանուեցան: Ատոնց պատասխանատուն Եհովա Աստուծն էր միթէ: Անչու՛ շտ ոչ: Յիսուս

Քրիստոս Աստուծոյ օճեալ Որդին է. ու եկեղեցիէն եղողները Քրիստոսի մարմնի անդամներն են, եւ հետեւաբար անոնց ամէն մէկը Աստուծոյ որդին է — Հռովմայեցիս Ը. 14-16:

Յետոյ Հռովմայեցիները շատ մը Քրիստոնեաներ հալածեցին ու սպաննեցին: Փրանսական կառավարութիւնը նոյն բանը ըրաւ: Բազմաթիւ ուխտեալ Քրիստոնեաներ ցեցերու վրայ այրուեցան Բրիտանական Կայսրութեան մէջ: Մեծ քարոզիչ Յովհաննէս Կալվինը, Զուիցերական կառավարութեան մէջ բարձր պաշտօն մը վարած ժամանակ, Սերվիթոսը ցեցերու վրայ այրել տուաւ: Թրքական կառավարութեան տակ՝ հազարաւոր մարդիկ անգթօրէն սպանուեցան Քրիստոնէութիւն դաւանելուն համար: Համաշխարհային Պատերազմի տեւողութեան՝ պատերազմող զրեթէ ամէն աղջի մէջ Քրիստոնեաները հալածուեցան, բանտարկուեցան ու ըսպանուեցան, այն պատճառաւ որ անոնք չէին ուզեր ընկեր արարածներ սպաննելով իրենց խղճին եւ Աստուծոյ օրէնքին դէմ գործել: Այդ սոսկալի ոճրագործութեանց ամբողջ յանցանքը միթէ մարդոց վերագրելու ենք: Ես կ'ըսեմ Ո՛չ: Աներեւոյթ իշխան Սատանային չար ազդեցութիւնն էր որ այդ օրինակ մեծ ոճրագործութեանց մղեց: Այդպիսի անիրաւութիւններ Եհովա Աստուծմէ չէին կրնար գալ, ինչու որ Նա արդար ու բարեգութ է եւ թէ՛ այդ հալածանքները գլխաւորաբար Իր գաւազներուն դէմ ուղղուած էին:

Իրոք ապացոյցները կը յայտնեն թէ՛ այս աշխարհի աներեւոյթ իշխան Սատանան է այդ անիրաւութեանց պատասխանատուն, եւ այդ եզրակացութիւնը համաձայն է Յիսուսի խօսքերուն հետ, որ ըսած էր Իրեն հետեւողներուն. «Որովհետեւ... ես ձեզ աշխարհէն ընտրեցի, անոր համար աշխարհ ձեզ կ'ատէ... Եթէ դիս հալածեցին՝ ձեզ ալ պիտի հալածեն»: «Աշխարհի մէջ նեղութիւն պիտի ունե-

նաք» (Յովհ. ԺԵ. 18-21, ԺԶ. 33): Ասիկա ուրիշ ապացոյց մըն է թէ՛ Քրիստոնեաներուն հալածանքը Բանասրկու Սատանային դրդումով եղած է եւ թէ՛ նա է այս աշխարհիս աներեւոյթ իշխանը: Քրիստոնեաներուն պատերազմը ոչ թէ մարդոց՝ հապա աներեւոյթ Սատանային եւ անոր չարութեան գումարտակներուն դէմ եղած է: Այս կէտին շուրջ գրուած է. «Ձեր վրայ հագէք Աստուծոյ սպառազինութիւնը, որպէս զի կարող ըլլաք Սատանայի հրնարքներուն դէմ դնել: Վասն զի մեր պատերազմը արիւնի ու մարմնի հետ չէ, հապա իշխանութիւններու ու պետութիւններու հետ, այս աշխարհի խաւարին իշխանութիւններուն հետ, երկնաւորներուն մէջ եղող չար ողիներուն հետ»— Եփես. 2. 11, 12:

**ՆԵՐԿԱՅ-ԺԱՄԱՆԱԿՈՒԱՆ ՎԿԱՆԵՐ**

Յոյց տալու համար թէ երկրիս բոլոր աղգերուն աստուածը կամ աներեւոյթ իշխանը Սատանան է, եւ թէ նա է ժողովուրդներուն չարութեանց, ոճրագործութեանց, բռնաճնշումներուն եւ մեծ տառապանքներուն գլխաւոր պատասխանատուն, այս առթիւ կը կարգամ աշխարհիս քաջածանօթ մաս մը մարդոց վկայութիւնները:

Երկար ժամանակէ ի վեր անբարոյական նպատակներու համար կիներու առեւտուրը յառաջ տարուած է շատ մը աղգերու մէջ եւ կառավարութիւնները արտօնութիւն տուած են այդ տեսակ ամբարիշտ առեւտուրի: Այդ վատ ունակութիւնը խափանելու ջանք ըրին: Մանչեսթըր Կարտիըն-ը՝ իր 1928 Մարտ 6-ի թիւով հետեւեալը կ'ըսէ՝ այս ամբարիշտ առեւտուրը հետազօտելու եւ անոր խափանումը տեղեկագրելու համար սահմանուած Լիկայի Յանձնախումբին մասին.

«Անկարելի եղաւ արտօնեալ պրոնկութեան դրութեան անմիջական խափանման համար՝ բոլոր կառավարութիւններու կողմէ յանձնարարութիւն մը ձեռք բերել: Այդ դրութիւնը տա-

կաւին չարունակող երկիրներու, ինչպէս Տրանսայի, Իտալիոյ, Ռումանիոյ, Սպանիոյ եւ ձաբոնի, կառավարական ներկայացուցիչները հակառակ կեցան առաջարկին, խնդրելով որ խափանման հանրային կարգապահութեան եւ հանրային առողջութեան վրայ ունենալիք հետեւանքներուն մասին դարձեալ հետազօտութիւն կատարուի:... Պէլճիքական պատուիրակը խափանումի ամենէն համոզիչ շատագոյններէն մէկն էր, թէեւ արտօնութեան դրութիւնը տակաւին գոյութիւն ունի Պէլճիքայի մէջ:... Հինգ տարի առաջ, Տրանսա եւ ուրիշ կառավարութիւններ առարկեցին այդ հարցը ունէ կերպով խնդրոյ առարկայ ընելու դէմ, այն պատճառաբանութեամբ թէ ատիկա պարզ ներքին հարց մըն էր: Այժմ՝ այդ չարքերն միջազգային բնոյթ մ'ունենալը այլեւս չեն ուրանար»:

Ռումանական կառավարութեան մասին՝ Տիք Նէյրըն-ը իր 1928 Յունիս 13 թւին մէջ կ'ըսէ.

«Ռումանական կառավարութիւնը կը ջատագովէ ապակառութիւն ու բացայայտ կաշառակերութիւն. ան կը ներկայացնէ՝ կոտորած եւ Ռումանիոյ սահմաններուն մէջ գոտուած ազգային փոքրամասնութեանց համար բուռն հալածանք. ան՝ Ազատական կուսակցութեան գլխաւոր անդամներուն ստացուածքի իրաւունքին համար կը կանգնի՝ ի զին ուրիշ անհատներու եւ նոյն ինքն ազգին»:

Ռուսիոյ մէջ՝ կառավարութիւնը Սիօնկանները ամայի Սիպերիա կ'աքսորէ, ուր անոնք աննկարագրելի նեղութիւն կը կրեն: Նիւ Եորք Թայմզ-ը՝ իր 1928 Յունիս 3-ի թիւով՝ Տքթ. Արլոսօրօֆի ըսածներէն հետեւեալը մէջ կը բերէ.

«Աքսորուած Սիօնկաններու բնակութեան համար այնպիսի տեղեր կ'ընտրուին՝ ուր միայն երեքէն մինչեւ հինգ տուն կայ, երկաթուղիի կայարանէ հարիւրաւոր, երբեմն աւելի քան հազար, մղոն հեռու կը գտնուին, եւ տարին երեք անգամ սուրհանդակի ծառայութիւն կ'ստանան:

«Սովիէթի քաղաքական գաղտնի ոստիկանութիւնը, Օկրու, ամսական զրեթէ երեք տալէր միայն կը հայթայթէ իւրաքանչիւր աքսորականի:

«Դատապարտուածներուն արգիւտած է գիւղի սահմաններէն անդին անցնել: Այն աքսորականները որ արձանագրութեան համար ամէն օր չեն ներկայանար՝ փախչել ջանացողներ կը նկատուին եւ բանտարկութեամբ կը պատժուին:

«Մանր տեղէ տառապող հիւանդներ բաշքելով արձանագրելու կը տարուին ամէն օր: Բիրկիտիայի մէջ՝ քառասունէ

աւելի արտորուած Միօնականներ բանտարկութեամբ պատժուած են՝ իրենց տուներուն մէջ նամակ դռնուած ըլլալուն համար: Ամէն երկրորդ ամիսը արտարկաններուն տեղը կը փոխուի՝ որ չըլլայ թէ «տեղաւորուին» եւ յարմար դրադուստր մը ձեռք ձգեն»:

Իտալիան խափանած է իր սահմանադրութիւնը, եւ իր ներկայ կառավարութիւնը բռնապետութիւն մ'է: Մանչէսթըր կարտիլըն-ը՝ իր 1928, Յունիս 9-ի թւին մէջ՝ Իտալիոյ նախկին վարչապետ Սինեօր Նիթի-ի մէկ թղթակցութիւնը կը հրատարակէ, որմէ հետեւեալը մէջ կը բերենք.

«Սանձուած ըլլալով ընկերակցութեան, համախմբուածի, մամուլի ամէն ազատութիւն, խարանուած ըլլալով ամէն անկախ, նոյն իսկ Պահպանողական եւ կաթոլիկ, թերթեր, մանչէր ու աղջիկներ իրենց մատաղ տարիքէն պիտի մեծանաւ բռնաճնշումի սկզբունքով:... Բէժիմին պաշտպանութեանը համար զինուած են անպատասխանատու տղաներ, նոյն իսկ պղծաբան աղջիկներ: Իտալիոյ փողոցներուն մէջ կրնանք տեսնել երկու սեռէ մանուկներ որոնք հրացաններով զինավարժութիւն կ'ընեն: Անոնց կ'ուսուցուին բռնաճնշումի սկզբունքները. ամէն օր պատերազմը կ'արդարացուի անոնց առջեւ. անոնց մատաղ սրտերուն մէջ տտելութիւն կը ներշնչեն: Անոնց կ'ըսեն թէ Իտալիան պէտք է կայսրութիւն մ'ըլլայ, եւ թէ այդ պատճառաւ նա ստիպուած է պատերազմել:... Ազատ արուեստական (ֆրոֆէշընըլ) դործունէութեան ամէն ազատութիւն կաշկանդուած է. դատաւորներուն անկախութիւնը խափանուած. մասնաւոր ատեաններ, որոնք այլեւս դատաւորներէ կազմուած չեն հասկա կուսակցութեան անդամներէ, կը դատեն ու կը դատապարտեն իրենց հակառակորդները, որոնք հազիւ թէ պաշտպանութեան ունէ միջոց ունին, եւ զանոնք զրբթէ միշտ կ'աքսորեն առանց հարցաքննութեան ենթարկելու: Անկարելի դարձած է Իտալիայէ հեռանալ առանց կառավարութեան թոյլտուութեանը:... Իտալիան հսկայ բանտի մը վերածուած է, ուր այլեւս ոչ կեանք կայ եւ ոչ ալ ուրախութիւն, եւ ուր, հակառակ եւրոպայի ամէն երկիրներու եւ Ամերիկայի մէջ պաշտօնական դործակատարներու կողմէ տարածուած կեղծ տեղեկութեանց, ծայրայեղ չքաւորութիւն մը օր ըստ օրէ ա'լ աւելի անտանելի կը դառնայ: Հազարաւոր պատուաւոր հպատակներ, որոնք Իտալիայէ հեռանալու թոյլտուութիւն չեն կրնար ստանալ այլեւս, ստիպուած են ամէն տեսակ նուաստացման ենթարկուիլ. երեւելի զօրավարներ, պատուիրակներ, ուսուցիչներ բանտ կը նետուին կամ անապատ կղզի-

ներ կ'աքսորուին: Բաղաբական ոճրադործութիւնն ու չարահարանքը մեծարանքի կ'արժանանան՝ ինչպէս որ կ'ըլլար Միջին Դարերու ամենավատ շրջաններուն մէջ»:

Ամէն երկրի ժողովուրդներուն ծանօթ է այն բռնաճնշումը՝ որուն ենթարկուած են Եգիպտոսի եւ Հնդկաստանի բնակիչները Բրիտանական հօկայ կայսրութեան կողմէ: Բնազաւաւորին մէջ անոր հասարակ ժողովուրդը սնանկանալու չափ ծանրարեւոտուած է տուրքերու ծանր բեռով մը՝ որպէս զի ազգը կարող ըլլայ կայսրութիւնը կանգուն պահել: Երկիրն ամէն կողմերէն ժողովուրդները աղաղակ կը բարձրացնեն իրենց վրայ դրուած անիրաւ տուրքերուն եւ ուրիշ բեռներուն համար:

Բնական միջոցներու տեսակէտէ՝ Միացեալ Նահանգները ամենէն հարուստ երկիրն է. սակայն՝ այս առատութեան երկրին մէջ միլիոնաւոր մարդիկ անգործ են եւ կեանքի պիտոյքներուն կարօտութիւնը կը քաշեն: Նոյն առնէ՝ հարկահաւաքութեան եւ կաշառակերութեան բեռը ծանրացած է սնանկացման աստիճան: Նիւ Եորք Ամերիքըն-ը՝ իր 1927 Դեկտեմբեր 17 թւին մէջ կ'ըսէ.

«Կառավարութեան անէծքն են կաշառակերութիւն եւ ապականութիւն: Չկայ տեղ մը ուր անոնց բեռը այնքան ծանր ըլլայ որքան Նիւ Եորքի մէջ:... Միջին քաղաքացին սնանկացման կէտին կը հասնի՝ երբ ծուռ քաղաքականութիւնն ու խարդախ անեւտրականութիւնը միանալով բեռը կը կրկնապատկեն: Քուինզի մէջ՝ շատ մը կալուածատէրներ, ինչպէս նաեւ տանուտէրներ, իրենց ստացուածքները վաճառման հանուելու սպաննալիքին տակ կ'ը դառնուին. Քուինզի կոյուղիի արտակարգ հարկադրութեան (իստիւմէնթ) դոհացում տալու համար: Ոմանք այնպէս կը հաշուեն թէ՛ ձրմէյքայի կերտուածքին (սիստէմ) ամբողջ 16 միլիոն տալէրի ծախսին կէսը կաշառակերութիւն է»:

Լոյսի եւ զօրութեան վիթխարի մենակալութիւնը (թրքս) պղծած է կառավարութեան զլխաւոր մասերը, դպրոցներն ու դուլէճները արշաւած, ուսուցիչները կաշառած, եւ մասնաւոր ջանք թա-

փած է մանուկներուն խորհուրդները կառավարական ուղիղ սկզբունքներէ հեռացնելու: 1928 Յունիս 21-ի Նիւ Եորք Ամերիքըն-ը երեսփոխան Լա Կարտիայի ըսածներէն հետեւեալը մէջ կը բերէ.

«Մերակոյտի մէջ կատարուած յայտնութիւնները, եւ զօրութեան մենակալութեան նկատմամբ Դաշնակցային Առեւտրական Յանձնախումբին ըրած հետազոտութիւնը, երեւան բերած են մին՝ այն ամենէն անխիղճ մենավաճառութիւններէն (մրճափրլի) որ երբէք կազմուած ըլլան այս երկրին մէջ: Երեւտրական զօրութիւնը բացարձակ մենավաճառութեան մը ձեռքերուն մէջ կը գտնուի, եւ քողաղբծումներէն այն պիտի հասկնանք թէ՛ միլիոնաւոր տալէրներ տրամադրուած են ապականելու, օրէնսդրութեան վրայ իշխելու, եւ ամբողջ երկրին թէ՛ հանրային եւ թէ՛ մասնաւոր գոլէճներու ուսուցմանց հսկելու:»

Այդ ամբարիշտ ընկերութիւնը նոյն իսկ կշտամբուած չէ Ամերիկեան ազգին տեսանելի իշխաններուն կողմէ:

Նիւ Եորք Թայմզ-ը՝ իր 1928 Յունիս 3 թւին մէջ Մերակուտական Ընտրութիւնի հետեւեալ խօսքերը մէջ կը բերէ.

«Այն մարդիկը որ իշխանութեան դուռն են՝ միշտ միեւնոյն մարդիկը չեն անոնց հետ՝ որոնց վրայ իշխանութիւն կը գործածեն: Կազմակերպուած փոքրամասնութիւններն են որ ներկայիս կ'իշխեն: Հասարակ ժողովուրդը կազմակերպուած չէ: Անոնք կառավարութեան մայրաքաղաքին մէջ գործակալներ չ'ունին իրենց շահերուն պաշտպանութեանը համար. սուտ բրորականտաներու միջոցով անոնք յաճախ սխալ տեղեկութիւն կ'օտանան ու կը խաբուին... Ներկայիս անցուած օրէնքներուն լման կէտը փոքրաւորական սկզբնաւորութիւն եւ եղկելի վախճան ունի... Կառավարութիւնը կենտոտ դիւանակալութիւն (պիւրօքրէսի) մը դարձած է՝ որ ամէն օր աւելի ու աւելի բռնատիրական կը դառնայ:»

Միացեալ Նահանգաց Մերակոյտին Մերակուտական Բիտ՝ ժողովրդային բեմերէ եւ մամուլի միջոցաւ կը յայտարարէ թէ՛ Միացեալ Նահանգաց կառավարութիւնը ներկայիս «բուէ եւ ազդեցութիւն գնողներու (պուլըր), կաշառակերներու եւ կառավարական նախասենեակներու (լապիտա) մէջ

բանակցողներու» ձեռքին մէջ կը գտնուի: Արդեօք Եհովա՞ն է այդ ամբարիշտ մարդոց Աստուածը:

Թէ որ ժամանակինս ներէր՝ կրնայինք երկրիս վրայ գտնուող ամէն ազգերու յանցանքները այս առթիւ յիշել: Իմ նպատակս չէ անոնց թերութիւնները խոշորցնել, հասցաւ ատոնցմէ այնքան մը յիշել ցոյց տալու թէ՛ ներկայիս երկրիս վրայ եղած բոլոր ազգերուն աներեւոյթ իշխանը կամ աստուածը՝ Բանսարկու Սատանան է եւ ոչ թէ Եհովան: Սատանային միշտ չարութեան համար ի դործ դրած ազդեցութեան պատճառաւ է որ՝ ժողովուրդներուն դէմ ոճիրներ յառաջ կը տարուին եւ ամէն ազգաց ժողովուրդները այնքան տառապանաց կ'ենթարկուին: Միեւնոյն ատեն նա եռանդուն կերպով ջանացած է ժողովուրդը ճշմարտութեան նկատմամբ կոյր պահել:

Սատանան ի՞նչ նպատակ կրնար ունեցած ըլլալ մարդիկը այսպիսի ողբալի կացութեանց առաջնորդելով, ազգերը իրարու դէմ պատերազմի մղելով եւ նոյն ատեն իրենք իրենց Գրիստոնեայ կոչել տալով: Միշտ Սատանային գլխաւոր նպատակակէտը եղած է Եհովա Աստուծոյ անունը անպատուել, դժնեկա մարդոց ատելի դարձնել եւ զանոնք Անկէ հեռացնել, որպէս զի անոնք միշտ իր (Սատանայի) իշխանութեանը ու տիրապետութեանը տակ մնան: Նա նենգութեամբ համողած է կղերները՝ իր տեսանելի ներկայացուցիչները, որ քարոզեն թէ երկրիս ազգերուն Աստուածը Եհովան է, որպէս զի այդ կերպով Եհովան նկատուի բոլոր պատերազմներուն եւ ոճիրներուն պատասխանատուն: Այդպէս՝ նա պատճառ եղած է որ միլիոնաւոր ուղղամիտ մարդիկ ճշմարիտ Աստուծոյ հեռանան եւ մերթն Անոր Ոսթըր, Աստուածաշունչը:

Բոլոր ազգերու գլխաւոր մարդիկը կը խոստովանին թէ՛ Համաշխարհային Պատերազմէն յետոյ ոճրագործութիւնն ու ամբարշտութիւնը շատցած է.

թէ՛ կազմակերպեալ Գրիստոնէութիւնը ժողովուրդին վրայ ունեցած իր ազդեցութիւնը կորսնցնելու վրայ է. թէ՛ բարձր դիրքերու վրայ գտնուող մարդոց մէջ ապականութիւնը ա՛լ աւելի աչքառու կը դառնայ: Մ. Լօյտ ձօրճ, 1928 Յունիս 24-ի Կիրակին հրատարակուած յօդուածով մը կ'ըսէ.

«Պատերազմէն վերադարձող երիտասարդները այն եղրակացութեան եկած են թէ՛ բացայայտ կեղծիք մըն էր այն կըրօնքը որ բարբարոսութեան այդպիսի պոթկում մը թոյլատրեց ու քաջայերեց: Երիտասարդաց ըմբոստութեան, կամ աւելի՛ դերազդութեան, ամենածանրակէիտ հարցին դէմ յանդիման կը գտնուին եկեղեցիները»:

Ինչո՞ւ համար է որ այս ողբալի կացութիւնը վերջին տասնեակ մը տարիներուն ա՛լ աւելի վատթարացած է: Ս. Գիրքը կուտայ պատասխանը. «Վա՛յ երկրի ու ծովու բնակիչներուն, վասն զի Բանասրկուն ձեզի իջաւ, որ շատ բարկութիւն ունի՛ գիտնալով որ քիչ ժամանակ պիտի կենայ»—Յայտնութեան ԺԲ. 12:

**ԻՆՉՈ՞Ւ ԹՈՅԼԱՏՐՈՒԱԾ**

Թէ որ Եհովա Աստուծոյ քով կը գտնուի ամէն արդար զօրութիւն՝ ուրեմն Նա ինչո՞ւ թոյլ տուած է Սատանային որ ազդերուն վրայ զօրութիւն բանեցնէ: Կարճ պատախանով, Նա այդ բանը թոյլատրած է՝ որպէս զի մարդկութիւնը փորձառութեամբ կատարելապէս տեղեկանայ մեղքին նորովից հետեւանքներուն: Աստուած մարդը Եղեմէն վճռուեց ու բարին դրաւ անոր առջեւ, եւ թողուց որ Սատանան ալ մարդուն առջեւ չարը դնէ. եւ թոյլ տուաւ որ մարդը իր բարոյական ազատութիւնը կամ ազատ կամքը գործածելով Սատանային հետեւի, վիշտ կրէ ու մեռնի, եւ կամ Աստուծոյ հաւատարիմ ու հնազանդ ըլլալով՝ յաւիտենական կենաց ու մահուան ճամբան սորվի: Այդ նպատակով՝ Եհովան Իսրայելացիները ընտրեց եւ ուխտ մ'ըրաւ անոնց հետ: Այդ

ուխտին ամենառաջին խօսքերը այն էին թէ՛ պէտք էջր որ Իսրայելացիները Եհովայէ զատ ուրիշ Աստուած ունենային եւ ուրիշ աստուածներու երկրպագութիւն ընէին եւ պաշտամունք մատուցանէին (Ելից Ի. 2-5): Եհովա այդ պատուէրը տուած էր ոչ թէ անձնասիրութենէն առաջնորդուած՝ հասաւ պարզապէս մարդուն բարիքին համար: Ուրիշ խօսքով՝ Եհովան ըսաւ անոնց. «Սատանան ու անոր ընկերակիցները ձեզ նեղութեանց ու մահուան պիտի առաջնորդեն: Եթէ կ'ուզէք ապրիլ՝ ձայնիս մտիկ ըրէք ու հնազանդեցէք ինծի»: Նա հոգածու ծնողքի մը նման կ'ըսէր իր որդւոյն. «Այդ չար մարդուն հետեւելով ամէն բան մի՛ կորսնցնէր, հասաւ երջանիկ ըլլալու համար ինծի հնազանդէ»:

Յաճախ այն ամբաստանութիւնը կ'ընեն թէ Եհովան անխիղճ եւ արիւնարբու Աստուած մըն է: Ատիկա բոլորովին անիրաւ ամբաստանութիւն մըն է: Մոռնալու չենք թէ Եհովան կեանքի միակ աղբիւրն է: Նա է տուողը եւ Նա իրաւունք ունի տրուածը ետ առնելու: Աղամ իր կամաւոր անհնազանդութեանը պատճառաւ՝ արդարօրէն մահուան դատապարտուեցաւ: Իսրուր մարդիկ ալ՝ ժառանգաբար առանց կենաց իրաւունքի ծնան (Հոովմ. Ե. 12, Սաղմ. ԾԱ. 5): Սատանային ազդեցութեան տակ գտնուող ազգեր՝ շարունակեցին Իսրայելացիները հարածել իրբեւ Աստուծոյ ընտրեալ ժողովուրդը: Անոնք խիստ ամբարիշտ էին. ուստի արդարօրէն դատապարտուելով արժանի էին մեռնելու: Նա դանոնք մահացուց՝ ձիւղ ինչպէս որ դատաւոր մը օրինաւորապէս կը մահացնէ դատապարտուած ոճրագործ մը: Երբ Իսրայելացիները կամաւորապէս հակառակեցան Աստուծոյ օրէնքին՝ Եհովան դանոնք իրենց բարելաութեանը համար պատժեց՝ ուրիշ ազգեր՝ որպէս դահիճ գործածելով: Ամէն ատեն ալ Աստուծոյ զործերը օրինաւոր, արդար եղած եւ մարդուն բարիքին համար կատարուած են:



Երկու հազար հինգ հարիւր տարի առաջ՝ Իս-  
րայէլի անհնադանդութեանը պատճառաւ Աստուած  
Իր շնորհը անկէ վերցուց եւ թողուց որ Բաբելոնի  
Կայսրութիւնը ի դործ դնէ՝ Իսրայէլի նկատմամբ  
ունեցած Իր դատաստանը: Եւ նոյն ատեն Նա ըսաւ  
թէ՝ ապագային արդարադատ կառավարութիւն մը  
պիտի հաստատէ այն կակին դալուն ժամանակը՝  
Պրուն իրաւունքն է իշխել: Հաւատարիմները Եհո-  
ւայի այդ երանելի ժամանակին է որ կ'սպասեն:

ԿԱՌԱՎԱՐԻՉԸ

Արդեօք այդ խօսքէն ա՞յն պիտի հասկնանք թէ՝  
Եհովան մտադիր է երկրիս վրայ արդարադատ կա-  
ռավարութիւն մը հաստատել յօգուտ մարդկու-  
թեան: Այո՛, ճիշդ այդ բանն է որ ըսել կ'ուզուի:  
Յիսուս Քրիստոս Աստուծոյ սիրելի Որդին է: Նա  
աշխարհի օծեալ Կառավարիչը կամ Թագաւորն է՝  
եւ Աստուծոյ որոշեալ ժամանակին ու Անոր կամքին  
համաձայն՝ Նա աշխարհիս անտեսանելի Իշխանը  
պիտի ըլլայ: Հոն՝ ուր անտեսանելի Սատանային  
զօրութիւնը դործածուած էր չարութեան համար՝  
այլեւս անտեսանելի Քրիստոսի զօրութիւնը պիտի  
դործածուի երկրիս բոլոր ժողովուրդներուն օգտին  
եւ օրհնութեանը համար:

Երբ Յիսուս Պիղատոսի առջեւ էր՝ յայտարարեց  
թէ Ինք էր այն Օծեալը որ աշխարհի վրայ պիտի իշ-  
խէր: Մեռելներէն յարուցուած ժամանակ՝ երկնա-  
յին ու երկրային ամէն զօրութիւն Անոր յանձնուե-  
ցաւ (Մատթ. ԻԸ. 18): Այսուհանդերձ, Նա անմի-  
ջապէս չսկսաւ այդ զօրութիւնը դործածել: Իր եր-  
կինք համբարձած ատեն՝ Եհովան ըսաւ Անոր՝ ինչ-  
պէս որ գրուած է Սաղմ. ճԺ. 1-ին մէջ. «Նստէ իմ  
աջ կողմս, մինչեւ որ քու թշնամիներդ ոտքերուդ  
պատուանդան ընեմ»: Ինչպէս որ Յիսուսի ըսածնե-  
րէն ալ յայտնի է՝ Համաշխարհային Պատերազմը  
այդ սպասուած ժամանակին վախճանը նշանակեց

(Մատթ. ԻԴ. 3-14): Ահա այդ ատեն էր որ Եհովան  
ըսաւ. «Ես իմ Թագաւորս իմ սուրբ լեռանս, Սիօնի,  
վրայ դրի» (Սաղմ. Բ. 6): Եւ այժմ Եհովան կ'ըսէ  
Քրիստոսի, երկրիս արդար կառավարիչին. «Ոնդրէ  
ինձմէ, ու հեթանոսները (ուհրեայ ազգերը) քեզի  
ժառանգութիւն պիտի տամ, ու (մինչեւ) երկրի  
ծայրերը քեզի ստացուածք. զանոնք (չարութեան  
ուժերը) երկաթէ դաւազանով պիտի կտարես. բրու-  
տի ամանի պէս պիտի վերես զանոնք»— Սաղ-  
մոսաց Բ. 8, 9:

Համաշխարհային Պատերազմին սկզբնաւորու-  
թիւնը՝ Եհովայի սպասուածին վախճանը նշանակեց:  
Սատանան այդ ատեն երկինքէն վար՝ երկրիս վրայ  
նետուեցաւ, որպէս զի հոս՝ այս աշխարհի մէջ յա-  
ռաջ տանի իր չարութիւնը՝ ուրկէ Աստուած կ'ըզ-  
գուչացնէ զմեզ (Յայտ. ԺԲ. 12): Եհովան այժմ կը  
պատուիրէ որ՝ Սատանայի զօրութեան կործանման  
ձեռնարկելէն առաջ՝ այժմ ազդարարութիւն տըր-  
ուի ազգերուն. հետեւաբար Նա կ'ըսէ երկրիս իշ-  
խաններուն. «Ուստի հիմա, ով Թագաւորներ, միտ-  
քերնիդ առէք, երկրի դատաւորներ, խրատուեցէք:  
Երկիւղով Տիրոջը ծառայեցէք (Անոր հպատակե-  
ցէք), . . . որպէս զի չբարկանայ, ու ճամբուն մէջ  
չկորսուիք, երբ անոր բարկութիւնը քիչ մը բոր-  
բոքի. երանի՛ այն ամենուն որոնք անոր կը յու-  
սան»— Սաղմոսաց Բ. 10-12:

ՄԵՐ ՀԱՐՅԸ

Այժմ երկրիս ազգերուն եւ ժողովուրդներուն  
առջեւ դանդաղ մեծ հարցն է՝ Ո՞վ է ձեր Աստուածը  
եւ որո՞ն է որ պիտի ծառայէք, Սատանայի՞ն  
թէ Եհովայի:

Եհովա Աստուած մօտ ատենէն պիտի կործանէ  
Սատանային հիմնած կազմակերպութիւնը եւ ար-  
դարութիւն պիտի հաստատէ երկրիս վրայ: Այդ  
բանը ընելէն առաջ՝ Նա երկրիս ազգերուն պատե-

հուլիսն կ'ընծայէ Սատանայէն կամաւորապէս հը-  
րաժարելու, Եհովան իբրև միակ ճշմարիտ Աստու-  
ուածը ճանչնալու եւ Քրիստոսն ալ՝ իբրև երկրիս  
օրինաւոր եւ արդար Կառավարիչը: Ուստի որոշու-  
ած է ներկայիս ազգերուն ու ժողովուրդներուն  
ազդարարել որ Եհովայի կողմը անցնին: Ի՞նչ պի-  
տի պատահի թէ որ անոնք թերանան այդպէս ընելէ:

ԱՐՄԱԳԵՂՈՆ

Որոշ ժամանակներու մէջ՝ Եհովա աչքառու  
կերպով Իր անունը մարդոց առջև բերած է՝ որպէս  
զի չմոռնան թէ Ինք է իրենց միակ Բարերարն ու  
Կենսապարգեւը: Երբ Եգիպտացիք Իսրայելացիները  
կը ճնշէին՝ Աստուած Եգիպտոս իջաւ Իրեն անուն  
վաստկելու (Բ. Թագ. է. 23): Նա Մովսէսն ու Ա-  
հարոնը զրկեց Եգիպտացիներուն ազդարարելու հա-  
մար: Այդ ժամանակ տեղի ունեցած բաները նախա-  
պատկերեցին ապագային տեղի ունենալիք մեծա-  
գոյն բաները եւ որոնք սկսած են ներկայիս տեղի  
ունենալ (Ա. Կորնթ. Ժ. 11): Մովսէսն ու Ահարոնը  
ազդարարութիւն տալով՝ Քրիստոսն ու Անոր եկե-  
ղեցին պատկերացուցին: Եգիպտոսն ու Փարաւոնը  
պատկերացուցին Սատանան ու անոր կազմակեր-  
պութիւնը: Աստուած՝ այն ժամանակ Իր զօրութիւն-  
ը գործածեց Եգիպտացիներն ու անոնց բանակները  
կործանելու համար: Այժմ ազգերը մերժած են Ե-  
հովայի կողմը անցնիլ եւ տակաւին Սատանայի յա-  
րած կը մնան, ու Արմազեղոնի մեծ պատերազմին  
մէջ Աստուած պիտի կործանէ Սատանան ու անոր  
կազմակերպութիւնը ու երկրիս բոլոր ազգերն ու  
ցեղերը ահանատես պիտի ըլլան այդ բանին:

Թէպէտեւ Արմազեղոնը բոլոր ազգերն ալ պիտի  
պարփակէ՝ սակայն Համաշխարհային մեծ Պատե-  
րազմին նման կռիւր ազգերու միջեւ չէ որ պիտի  
մղուի: Ս. Գիրքը կը յայտարարէ թէ անիկա «Ամե-  
նակալ Աստուծոյ մեծ պատերազմը» պիտի ըլլայ

(Յայտ. Ժ2. 12-14): Այդ պատերազմին պատճառը  
սա է. Ժամանակը հասած է որ՝ Աստուծոյ օճեալ  
Թագաւորը, Քրիստոս Յիսուս, աշխարհի իշխանու-  
թիւնը իր ձեռքին մէջ առնէ եւ արդարութեամբ իշ-  
խէ: Սատանային յոռի վարչութիւնը պարտի ներ-  
կայիս վերջանալ: Սատանան աննկարագրելիօրէն  
գոռոզ, անդուժ եւ ամբարիշտ ըլլալով՝ կը կարծէ  
թէ կրնայ Եհովան յաղթել եւ հետեւաբար Արմազե-  
ղոնի մեծ պատերազմին համար կը պատրաստուի:  
Նա իր տեսանելի ու անտեսանելի բոլոր ուժերը ի մի  
կը համախմբէ: Նա ամէն ճիգ ի գործ կը դնէ զԱստու-  
ուած վարկաբեկելու, մարդիկը Աստուծոյ դէմ հա-  
նելու եւ ստիպելու համար զանոնք՝ որ ընդգրկեն  
կրօնք մը որ զԱստուած բոլորովին դուրս կը թողու:  
Նա դիւանագէտներու միտքերը կը կուրացնէ, հա-  
ւատացնելով անոնց թէ՛ կարող են բաղձալի կառա-  
վարութիւն մը հաստատել եւ թէ՛ այդ բանին համար  
դասալիք ու խաբեբայ կղերականութեան խոր-  
հուրդները կրնան օգտակար ըլլալ իրենց: Նա ելեւ-  
մտադէտներուն կը հաւատացնէ թէ՛ իրենց զօրու-  
թիւնը անդիմադրելի է՝ եւ թէ՛ իրենք կրնան կառա-  
վարող տարրերը ապականել եւ ժողովուրդը իրենց  
ուզածին պէս ճնշել: Ահա՛ այսպէս, չարութեան ու-  
ժերը շարուած են Աստուծոյ ու Անոր օճեալ-  
ներուն դէմ:

Եհովան ալ պիտի չթողու որ Սատանան իր կու-  
րացուցիչ ազդեցութիւնը գործածէ երկրիս ժողո-  
վուրդներուն վրայ: Արմազեղոնի մեծ պատերազմը  
անհրաժեշտ է՝ որպէս զի բոլոր արարածները սոր-  
վին թէ Եհովան է ճշմարիտ Աստուածը եւ Իրմէ՛ զատ  
ուրիշ մը չկայ: Աստուծոյ Սօսքը Արմազեղոնի պա-  
տերազմի մասին գաղափար մը կուտայ մեզի: Հա-  
սած է գործի սկսելու ժամանակը՝ ու Նա կ'ըսէ Իր  
սիրելի Որդւոյն, Իր օճեալ Քահանային ու Թագա-  
ւորին. «Ի՞նչ մարդոց որդիներէն աւելի գեղեցիկ  
ես, քու շրթունքներուդ վրայ շնորհք թափուած է»

անոր համար Աստուած քեզ օրհնեց յաւիտեան: Ով հոգի, թուրդ մէջքդ կապէ քու փառքովդ ու վայելչութիւնովդ: Ու քու վայելչութիւնովդ յաջողուէ՝ ճամբարութեան ու հեղութեան եւ արդարութեան համար հեծիր. ու քու աջ ձեռքդ քեզի ահաւոր բաներ պիտի սորվեցնէ»— Սաղմ. 106. 2-4:

Դարձեալ՝ Նա կ'ըսէ երկրիս նոր կառավարիչին. «Բու թշնամիներուդ մէջտեղը դուն տիրէ»: Քանի որ Սատանան կը մերժէ իր իշխանութենէն հրաժարիլ՝ պատերազմը յառաջ պիտի տարուի: Մարգարէն ասոր մասին իր նկարագրութիւնը շարունակելով կ'ըսէ. «Տէրը քու աջ կողմդ է. անիկա իր բարկութեան օրը թաղաւորներ պիտի ջարդէ: Անիկա հեթանոսներուն (ոչ-Հրեայ ազգերուն) մէջ դատաստան պիտի ընէ, մեռելներով պիտի լեցնէ, շատ երկիրներու վրայ դուրս եղողը (Սատանան) պիտի ջարդէ»— Սաղմ. ձԺ. 5, 6:

Արմազեղոնի պատերազմին ունենալիք լայնածաւալ ազդեցութեանը մասին Աստուծոյ Երեմիա մարգարէն կ'ըսէ. «Անոր բարձր ձայնը մինչեւ երկրի ծայրերը պիտի հասնի. վասն զի Տէրը ազգերուն հետ դատաստան ունի. անիկա ամէն մարմնի հետ դատ պիտի վարէ, ու ամբարիշտները սուրի պիտի տայ կ'ըսէ Տէրը: Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. ահա չարիք պիտի ելլէ, մէկ ազգէ ուրիշ ազգի պիտի անցնի, ու երկրի ծայրերէն մեծ մրրիկ (նեղութիւն) պիտի ելլէ: Եւ այն օրը Տիրոջմէ սպաննուածները երկրին մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը պիտի ըլլան. անոնց համար սուգ պիտի չբռնուի, անոնք պիտի չժողովուին ու պիտի չթաղուին, երկրի երեսին վրայ աղբի պէս պիտի ըլլան: Ողբացէք, ով հովիւներ, ու աղաղակեցէք, եւ մոխիրի մէջ թաւալեցէք, ով հօտին ընտիրները. վասն զի ձեր մորթըլելու եւ ցիրուցան ըլլալու օրերը լրացած են, ու պատուական ամանի պէս պիտի իյնաք: Եւ հովիւներուն փախչելու ճամբան ու հօտին ընտիրներուն

աղատուելու միջոցը պիտի կորսուի: Հովիւներուն աղաղակին ձայնը, եւ հօտին ընտիրներուն ոռնալուն ձայնը կայ, վասն զի Տէրը անոնց արօտները կորսնցուց»— Երեմիա ԻԵ. 31-36:

Այժմ ազգերուն ազդարարութիւն կը տրուի անոնց միջոցաւ՝ որոնք Եհովայի նուիրուած են, հոգ չէ թէ այդ նուիրուածները անցեալին մէջ ինչ հաւատքի կամ յարանուանութեան պատկանած եւ կամ ինչ բանի որ այժմ առայժմ ըլլան: Սատանան ու անոր գործակալները մոլեգնօրէն կը ջանան այդ ազդարարութիւնը արգելիլ: Յիսուս յայտարարեց թէ այդ վկայութեան տրուելէն վերջ Արմազեղոնը վրայ պիտի հասնի, որ այնպիսի նեղութեան ժամանակ մը պիտի ըլլայ որուն նմանը աշխարհ բնաւ տեսած չէ եւ ո՛չ ալ պիտի տեսնէ այնուհետեւ— Մատթէոսի ԻԴ. 21, 22:

Մարգարէն նոյն բանը նկարագրելով կ'ըսէ. «Երկիրը (Սատանային տեսանելի կազմակերպութիւնը) գինովի պէս անդադար պիտի երերայ, ու հիւզի պէս պիտի շարժի. եւ անոր մեղքը պիտի ծանրանայ անոր վրայ, ու անիկա պիտի իյնայ ու մէյ մըն ալ պիտի չելլէ: Եւ այն օրը Տէրը բարձրէն այցելութիւն պիտի ընէ հպարտներուն զօրքին, ու երկրի վրայ՝ երկրի թաղաւորներուն»— Եսայիայ ԻԴ. 20, 21:

Եհովան ինչո՞ւ համար այսպիսի ահաւոր պատերազմի մը կը դիմէ: Պատասխանը այն է թէ՛ պէտք է որ չարիքը արմատախիլ ըլլայ, եւ Սատանան, որ այս աշխարհիս աստուածն է, դադրի՛ երկրիս կառավարութիւններուն եւ ազգերուն վրայ իշխելէ, եւ արդր համար պէտք է որ նա բոլորովին վտարուի եւ իր կազմակերպութիւնը յաւէտ կործանի: Եհովան Իրեն համար անուն մը պիտի վաստակի, եւ Իր գորութիւնը այդպէս ցուցադրելով՝ մարդոց պիտի սորվեցնէ թէ ինք է Ամենակարող Աստուածը եւ թէ

կեանքի, աղատութեան եւ երջանկութեան օրհնութիւնները մի միայն իրմէ կը բղխին:

Մարգարէն դարձեալ Արմաղեղոնը եւ անկէ վերջ գալիքները նկարագրելով կ'ըսէ. «Գինով մարդու պէս կը դողդղան ու կ'երերան, ու անոնց բոլոր իմաստութիւնը կը հատնի: Այն ատեն Տիրոջը կ'աղաղակեն իրենց նեղութեանը մէջ, ու կը փրկէ զանոնք իրենց տառապանքներէն: Մրրիկը հանդարտութեան կը դարձնէ, ու ալիքները կը դադարին: Իրենք ալ կ'ուրախանան որ դադարեցան. եւ կ'առաջնորդէ անոնց իրենց ուղած նաւահանդիստը» — Սաղմոսաց ձե. 27-30:

ԱՆԿԵՂԾՆԵՐՈՒՆ ՓԱՓԱՔԸ

Հանրապետական թէ՛ ուսման վարական՝ եւ կամ բաղադրական ուրիշ համոզումներ ունեցող բոլոր անկեղծ անհատներուն փափաքն է՝ որ մարդիկ բարդաւած ըլլան եւ խաղաղ ու երջանիկ կերպով ապրին. եւ բովանդակ աշխարհի բոլոր անկեղծ թագաւորներու եւ իշխաններու փափաքն է որ մարդիկ պատերազմէ ազատ կառավարութիւն ունենան եւ խաղաղութիւն, առողջութիւն ու կեանք վայելին: Այսպիսի փափաքներ բնաւ չեն կրնար իրականանալ՝ որքան ատեն որ Բանասրկու Սատանան է մարդուն աստուածը կամ աներեւոյթ իշխանը: Մեծապէս կարեւոր է Արմաղեղոնի պատերազմը, ա'լ մօտեցած է ու ամբողջ երկիրը պիտի ցնդի, որպէս զի մարդիկ այն գիտակցութեանը դան թէ ՅՏովան միայն կըրնայ դոհացում տալ իրենց արդար փափաքներուն: Ուստի Աստուած կ'ըսէ. «Քիչ ատենէն ետքը նորէն երկինքը (անտեսանելի իշխանութիւնը) ու երկիրը (տեսանելի իշխանութիւնը), եւ ծովը (նոյն իսկ երկրիս ժողովուրդները) ու ցամաքը պիտի շարժեմ: Նաեւ ամէն ազգերը պիտի շարժեմ, ու ամէն ազգերուն ցանկալի բաները պիտի գան. եւ այս տունը փառքով պիտի լեցնեմ» — Անդեայ Բ. 6, 7:

ԱՐԴԱՐ ԻՇԽԱՆԸ

Գրիստոս, որ Աստուծոյ օծեալ Թագաւորն է, այլեւս պէտք է որ երկրիս իշխանն ըլլայ: Անոր ամբողջ զօրութիւնն ու ազդեցութիւնը բարիի համար պիտի գործածուին: Անոր իշխանութեան ներքեւ ա'լ պիտի դադրին ամէն բռնակալութիւն, կաշառակերութիւն ու ոճրագործութիւն, եւ աղքատներն ու կարօտեալները իրենց արդար բաժինը պիտի ստանան եւ Անոր կառավարութիւնը անաչառ կերպով պիտի կատարէ իր գործերը: «Ժողովուրդին աղքատներուն իրաւունք պիտի ընէ, տնանկին դաւակնները պիտի ազատէ, ու բռնաւորը պիտի ջարդէ: ... Անոր օրերուն մէջ արդարը պիտի ծաղկի, ու շատ խաղաղութիւն պիտի ըլլայ, որքան որ լուսինը կը մնայ» — Սաղմ. ՀԲ. 4, 7 — Տես Անդլ. Ս. Գիրքը:

Գրիստոսի ուսերուն վրայ հանգչող կառավարութիւնը խաղաղութեան ու արդարութեան կառավարութիւն մը պիտի ըլլայ (Շասյ. Թ. 6, 7): Նկատելով որ ժողովուրդները այլեւս պատերազմ չեն ուզեր՝ մարդիկ ամէն ճիգ կը թափեն որ երկրիս վրայ խաղաղութիւն հաստատուի: Բայց անոնք չեն կրնար յաջողիլ: Պատերազմը այն ատեն միայն պիտի դադրի երբ Սատանան կապուի եւ զանիկա իր զօրութենէն մերկացուի, եւ այս բանը տեղի պիտի ունենայ Արմաղեղոնի մեծ պատերազմին մէջ: Սատանային կապուիլը նկարագրուած է Յայտնութեան Ի. 1-3-ին մէջ. «Եւ հրեշտակ մը տեսայ, որ երկինքէն կ'իջնէր, ու անդունդին բանալին եւ մեծ շղթայ մը ունէր իր ձեռքը. ու բռնեց վիշապը, այսինքն առաջին օձը, որ Բանասրկուին ու Սատանան է, եւ կապեց զանիկա հազար տարի. ու անդունդը ձգեց զանիկա, եւ դոցեց ու վրայէն կնքեց, որ ա'լ չմոլորեցնէ ազգերը՝ մինչեւ հազար տարին լմննայ»:

Նոյն ժամանակուան մասին Աստուած իր մարդարէին միջոցաւ կ'ըսէ. «Պատերազմին ազեղը պիտի

կոտորի. ու անիկա (Աստուած) ազգերուն խաղաղութիւն պիտի խօսի»— Զաքար. Թ. 10:

Երբ Եհովայի կառավարութիւնը սկսի Քրիստոսի միջոցաւ լիովին իշխել՝ այն ատեն մարդիկ ա՛լ պիտի չպատերազմին (Եսայ. Բ. 2-4): Արդարադատ իշխանութիւնը ժողովուրդին ոչ միայն խաղաղութիւն՝ հապանաեւ բարդաւաճութիւն պիտի ընծայէ: Աղքատութիւնը շուտով պիտի անհետանայ, երկիրը առատ բերք պիտի տայ, եւ Տէրը բոլոր ազգերուն կոչունք մը պիտի ընէ (Եսայ. ԻԵ. 6, Սաղմ. 46. 6): Ժողովուրդին դէմ ա՛լ խարէութիւն ու նենգութիւն պիտի չկրնան ի գործ դնել: Մարդիկ իրենց արդար իրաւունքներուն նկատմամբ այլեւս կոյր տգիտութեան մէջ պիտի չպահուին. հապա անոնց ամենապղտիկէն մինչեւ ամենամեծը ճշմարտութիւնը պիտի գիտնայ (Երեմ. ԼԱ. 31, 34): Այո՛, աւելին կայ զեռ. հիւանդութիւն, վիշտ ու մահ պիտի դադրին ու մեռելները գերեզմաններէն ետ պիտի դան եւ իրենց սիրելիներուն պիտի միանան— Յովհաննու Ե. 28, 29, Յայտ. ԻԱ. 1-5:

Եսայիայ ԻԵ. 6-8-ին մէջ գրուած է թէ Աստուած բոլոր ազգերուն պարարտ բաներու կոչունք մը պիտի ընէ. թէ՛ ամէն կուրուքիւն ու թիւրիմացութիւն պիտի վերցուին. թէ՛ Նա մահուան պիտի յաղթէ եւ բոլոր աչքերէ արցունքները պիտի սրբէ: Այն ատեն անոնք որ զԱստուած կը սիրեն ու Անոր կը հնազանդին եւ իրենց անձերը կ'ենթարկեն երկրիս արդար անտեսանելի իշխանին բարեբար ազդեցութեանը՝ յաւիտեան պիտի ապրին ու բնաւ պիտի չմեռնին— Եղեկ. ԺԼ. 27, 28:

Ինչո՞ւ համար է որ ափ մը մարդիկ կրնան անսահման հարստութիւն եւ զօրութիւն ունեցող վիթխարի ընկերակցութիւններ կաղմել, եւ դանոնք անամօթաբար գործածել կառավարական պաշտօնակները ապականելու եւ ժողովուրդը ճնշելու համար: Ինչո՞ւ համար է որ պաշտօնական կառավարութիւնը

նը մասնաւոր շնորհներ կ'ընծայէ չափազանց հարուստներուն եւ խուլ կը ձեւանայ ճնշուածներուն աղաղակներուն նկատմամբ: Ինչո՞ւ համար է որ այդ ընկերակցութիւններէն մին, այսինքն՝ Նէշընըլ Պրօուֆէսըրինկ Բըմբընի-ն, կցերներուն հետ կը դաշնակցի եւ անոնք միասին կը ջանան վճռել թէ՛ ժողովուրդը ի՛նչ պէտք է լսէ կամ չլսէ կրօնքի ու Աստուածաշունչի նկատմամբ: Ինչո՞ւ համար է որ կղերները կը հակառակին ու ճմարտութիւնը ժողովուրդին քարոզողները կը հայածեն եւ նոյն ատեն կեղծ բարեպաշտութեան (սէնէքիսօցիքս) կուրացուցիչ ծուխ մը կը հանեն, որուն ետեւը պահուած՝ անգութ ընկերակցութիւններն ու անխիղճ քաղաքագէտները յառաջ կը տանին իրենց զաղրալի գործը: Կը պատասխանեմ. Պատճառը այն է որ Բանասարկու Սատանան է անոնց աստուածը: Անոնք անոր իշխանութեանն ու ազդեցութեանը տակ են եւ պատրաստ են անոր կամքը կատարելու: Արդեօք ժողովուրդին համար ազատութեան սեւէ յոյս չկա՞յ: Այո՛, կա՛յ, եւ այդ ազատութիւնը ա՛լ մօտեցած է:

Երկրիս ժողովուրդներուն բոլոր հայածանքներուն, ճնշումներուն եւ տառապանքներուն պատասխանատուն է Եհովայի ապստամբ որդին, որ երկար ատենէ ի վեր այս աշխարհիս իշխանն է: Հասած է Եհովայի նախասահմանած ժամանակը՝ որ ա՛լ վերջ գտնէ Սատանային ամբարիշտ իշխանութիւնը: Եհովան՝ Իր օծեալ ու հաւատարիմ Որդի Քրիստոս Յիսուսի միջոցաւ՝ Արմազեղոնի մեծ պատերազմին մէջ պիտի կործանէ Սատանայի կազմակերպութիւնը եւ ապա աշխարհը արդարութեամբ պիտի հաստատէ՝ որ ալ պիտի չսասանի— Սաղմ. ԴԶ. 10:

Ուստի ո՞վ պիտի յայտարարէ թէ ինք բացարձակապէս Եհովայի կողմէն է: Բոլոր գԱնիկա սիրողներուն մարտակոչը այսուհետեւ թող ըլլայ— «ԵՀՈՎԱՅԻ ԵՒ ԱՆՈՐ ՕԾԵԱԼԻՆ ՍՈՒՐԸ»:

Ես այն համոզումը ունիմ թէ՛ երկրիս ժողովուրդներէն շատ քիչեր են միայն որ իսկապէս կը փափաքին չար ըլլալ: Իշխանութեան գլուխը գտնուող մարդոցմէ շատեր՝ աւելի պիտի նախընտրէին արդարութիւն տեսնել երկրիս վրայ: Թէ՛ ժողովուրդները եւ թէ՛ իշխողները խաբողը եւ մոլորցնողը եղած է Բանսարկու Սատանան: Երբ ազգերն ու ժողովուրդները ճշմարտութիւնը ճանչնան եւ Աստուծոյ ծառայեն ու հնազանդին՝ այն ատեն ճշմարտապէս կրնայ ըսուիլ. «Երանի այն ազգին որուն Աստուածը Եհովան է»: Հարցը ներկայիս պարզ եւ որոշ է. Ազգերը տակաւին պիտի շարունակեն Սատանայի՞ն ծառայել, թէ՛ ոչ Եհովա Աստուծոյ պիտի ծառայեն ու հնազանդին:

Այս Յայտարարութիւնը ո՛չ ժողովուրդին, ո՛չ իշխանութեան գլուխը գտնուող մարդոց եւ ո՛չ ալ ժողովուրդը մոլորեցնող կոյր քարոզիչներուն դէմ ուղղուած է: Այս Յայտարարութիւնը ուղղուած է բոլոր արարածոց հասարակաց թշնամիին դէմ: Ան ուղղուած է՝ այն թշնամիին դէմ որ դարերով Եհովա Աստուծոյ անունը նախատած եւ անսահման վիշտ պատճառած է մարդոց: Ան ուղղուած է՝ Սատանային եւ խաւարի ու չարագործութեան մէջ օգնող անոր բոլոր ընկերակիցներուն դէմ: Այս Յայտարարութիւնը կ'ընենք վկայելու համար այն իրողութեան մասին թէ՛ Սատանային իշխանութիւնը մօտ ատենէն վերջ պիտի գտնէ եւ թէ՛ Եհովան՝ Իր անուանը եւ ժողովուրդին փրկութեանը համար, արդարադատ կառավարութիւն մը պիտի հաստատէ՝ որպէս զի երկրիս բոլոր ազգերը օրհնուին:

Ես կ'ոչ կ'ընեմ բոլոր ազգաց ժողովուրդներուն, բոլոր արդարասէրներուն, որ Եհովա Աստուծոյ կողմը անցնին: Ամէն անոնք որ կը փափաքին չարիքը արմատախիլ եղած, երկրիս վրայ մշտնջենական արդարութիւն հաստատուած եւ ժողովուրդը խաղաղութեամբ, երջանկութեամբ ու կեանքով օրհնուած

տեսնել, ոտքի ելլելով թող յայտնեն եւ Այո՛ ըսելով քուէ տան այս Յայտարարութեան մասին:

ՀԱԿԱՔՐԻՍՏՈՍԸ

«Ո՞վ է ստախօս եթէ ոչ ան որ կ'ուրանայ քէ Յիսուս՝ Քրիստոս չէ. անիկա է Նեոք (Հակաքրիստոսը) որ կ'ուրանայ Հայրը եւ Որդին»— Ա. Յովհ. Բ. 22:

**Ա**ՍՏՈՒԾՈՅ ԵԿԵՂԵՑԻՆ զբերով՝ Յովհաննէս Առաքեալը ցոյց կուտար թէ՛ Հակաքրիստոսին յայտնուելը ապացոյց մը պիտի ըլլար «վերջին ժամանակ»-ին հասած ըլլալուն: Պատասխանելով Իր աշակերտներուն այն հարցմանը թէ՛ վերջն աշխարհը եւ հետեւաբար «վերջին օրեր»-ը ի՞նչպէս յայտնի պիտի ըլլային՝ Յիսուս ըսաւ. «Վասն զի սուտ Քրիստոսներ եւ սուտ մարգարէներ պիտի ելլեն, ու մեծ հրաշքներ ու նշաններ պիտի ցուցնեն, որ եթէ կարելի է՝ ընտրեալներն ալ մոլորեցնեն» (Մատթէոսի ԻԴ. 24): Քրիստոնէական դարու ամբողջ շրջանին՝ այնքան խաբէութիւններ եւ կեղծաւորութիւններ դոյութիւն չ'ունէին որքան որ կան ներկայիս:

«Քրիստոս» Աստուծոյ «օծեալ»-ը կը նշանակէ: Յիսուս Քրիստոս Իր արեանը միջոցաւ մարդուն Փրկիչն է: Նա ատկէ ալ աւելին է: Նա՝ Եհովայի Գործադիր Պաշտօնեան է, Անոր նպատակները գլուխ հանելու համար ընտրուած: Նա այն մեծ Թագաւորն է՝ զոր Աստուած Սիօնի Իր սուրբ գահին վրայ դըրած է: Նա Աստուծոյ կազմակերպութեան գլուխն է, կազմակերպութիւն մը որուն միջոցաւ Եհովան երկրիս բոլոր ազգերն ու ընտանիքները պիտի օրհնէ:

«Հակաքրիստոս»-ը այն է որ Քրիստոսի դէմ է: Ան Քրիստոսի հակառակող կազմակերպութիւն մըն է: Ս. Գիրքը բացորոշապէս կը յայտնէ թէ Հակաքրիստոսը ստախօս ու խաբող մըն է (Բ. Յովհաննու 7): Բանսարկու Սատանան է ստութեանց հայրը,

մեծ խարերան եւ Գրիստոսի չարակամ հակառակորդը (Յովհ. Ը. 44, Յայտ ԺԲ. 9, ԺԳ. 14, Ի. 2, 3): Սատանան թէ՛ տեսանելի եւ թէ՛ անտեսանելի հզոր կազմակերպութիւն մը կառուցած է, որուն միջոցաւ ժողովուրդը խարած ու իրեն հպատակ պահած է:

Գրիստոս Մելքիսեդեկի կարգէն մշտնջենական Բահանայ է (Սաղմ. ՃԺ. 4): Հոս գործածուած քահանայ անունը կը նշանակէ Աստուծոյ Գործադիր Պաշտօնեան, որ յաւիտեան պիտի գործադրէ Աստուծոյ նպատակները: Իսկ Գրիստոս, Աստուծոյ «օծեալ», անունը մասնաւորապէս ցոյց կուտայ թէ Ան աշխարհի Թագաւորը կամ Կառավարիչն է: Օծել կը նշանակէ իշխանութիւն շնորհել (Եսայ. ԿԱ. 1, 2): Դաւիթ օծուեցաւ Իսրայէլի վրայ Թագաւոր ըլլալու (Ա. Թագ. ԺԳ. 13, Բ. Թագ. Ե. 3): Դաւիթ նախապատկեր մըն էր Գրիստոս Յիսուսի, զոր Աստուած օծեց աշխարհի վրայ Թագաւոր ըլլալու (Գործք Դ. 27, Ժ. 38, Երբ. Ա. 9): Պիղատոսի հարցման պատասխանելով Յիսուս ըսաւ. «Դուն կ'ըսես, քանզի Թագաւոր եմ. ես այս բանին համար ծնած եմ, եւ ասոր համար աշխարհ եկած, որպէս զի ճշմարտութեան համար վկայեմ» (Յովհ. ԺԸ. 37): Ուստի վճռական ապացոյց ունինք թէ «Գրիստոս» անունով մասնաւորաբար իշխանութեան է որ կ'ակնարկուի: Երբ Եհովային ժամանակը հասնի որ Իր սիրեցեալ Որդին որպէս Թագաւոր իշխելու զրկէ՝ Նա կ'ըսէ. «Ես օծեցի (հաստատեցի) իմ Թագաւորս իմ սուրբ լեռանս, Սիօնի, վրայ» (Սաղմ. Բ. 6): Ահա այդ ատեն է որ Եհովան երկրիս բոլոր իշխաններուն կը հրամայէ որ Իր Թագաւորին հնազանդին:

Բանի որ օծութիւնը Գրիստոսի Թագաւոր ըլլալը կը մատնանշէ, ուրեմն «Հակաքրիստոս»-ով մասնաւորապէս կ'ակնարկուի այն կազմակերպութեան՝ որ հակառակ է Գրիստոսի միջոցաւ հաստատուելիք Աստուծոյ Թագաւորութեան: Ատիկա պէտք է պար-

մակէ այն բոլոր արարածները որոնք այդ կազմակերպութեան գործօն անդամները կամ նեցուկներն են: Երբ կը ջանանք վճռել թէ որոնք Գրիստոսի եւ որոնք Հակաքրիստոսի կը պատկանին՝ կը բաւէ միայն ստուգել թէ որոնք են հակառակողները: Յիսուս ըսաւ. «Ան որ ինծի հետ չէ, ինծի հակառակ է, եւ ան որ ինծի հետ չ'ժողովեր, ցիր ու ցան կ'ընէ» (Մատթ. ԺԲ. 30): Այս խօսքերուն վրայ հիմնուած՝ կրնանք եզրակացնել թէ՛ բոլոր անոնք որ դրակասօրէն Գրիստոսի ու Անոր Թագաւորութեանը կողմնակից չեն՝ թէ՛ Անոր եւ թէ՛ Թագաւորութեանը հակառակ են, եւ ուղղակի կամ անուղղակի կերպով թշնամի կազմակերպութեան ձեռննուտ կ'ըլլան: Հետեւաբար թշնամի Սատանային կազմակերպութեան ծառայող ու ձեռննուտ եղողները Հակաքրիստոսի կը պատկանին:

#### ԽԱՌՈՂ

Բանի որ Ս. Գիրքը որոշապէս կը յայտնէ թէ Հակաքրիստոսը խարոզ մըն է, ատիկա ցոյց կուտայ թէ Հակաքրիստոսին եռանդուն գործակալները ժողովուրդին դէմ նենգութիւն ի գործ կը դնեն եւ հետեւաբար կը խարեն զանոնք: Ճշմարտութիւնը քարոզող եւ գործադրող մը չկրնար խարել, ինչու որ նա չջանար սեւէ մէկը սխալ առաջնորդել: Անոնք որ կը խարեն՝ անպատճառ կը քարոզեն ու կը գործադրեն այն ինչ որ ճշմարտութիւն չէ, եւ անոնք այդ բանը կ'ընեն նենգաւորաբար ու խարդախութեամբ: Խարել կը նշանակէ՝ կեղծաւորութիւն ի գործ դնելով սխալ առաջնորդել:

Ասոր զօրաւոր մէկ օրինակը կը գտնենք Փարիսեցիներուն մէջ, որոնք Յիսուսի աշխարհի վրայ եղած ատենական կղերներն էին: Անոնք այնպէս կը յայտարարէին թէ իրենք զԱստուած կը ներկայացընեն ու, ճշմարտութիւնը կը քարոզեն: Անոնք իրենց շրթներով Աստուծոյ կը մօտենային, բայց ի-

րենց սիրտերը խիստ հեռու էին Անկէ: Անոնք խաբէութիւն ի գործ կը դնէին, եւ այդ պատճառաւ Յիսուս անոնց ըսաւ թէ իրենք Սատանային աջակիցները եւ զաւակներն էին (Յովհ. Ը. 42-44): Նա զանոնք դատապարտեց որպէս կեղծաւորներ, ինչու որ անոնց խօսքերն ու գործերը իրարու համապատասխան չէին: Անոր խօսքերը պարզ ու շեշտակի են. — «Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ անանուխին ու սամիթին եւ չամանին տասանորդը կը վճարէք, ու կը ձգէք օրէնքին ծանր ծանր բաները, դատաստանը եւ ողորմութիւնը ու հաւատքը. ասոնք պէտք էր ընել, եւ զանոնք չձգել: Կոյր առաջնորդներ, որ մտղուկը կը քամէք եւ ուղտը կը կլլէք: Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ զաւակին ու սնակին դուրսի կողմը կը մաքրէք, ու ներսէն յափշտակութեամբ եւ անիրաւութեամբ լեցուն են: Կոյր փարիսեցի, առաջ զաւակին ու սնակին ներսի կողմը մաքրէ, որպէս զի անոնց դուրսի կողմն ալ մաքուր ըլլայ: Վա՛յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ կը նմանիք ձեփած գերեզմաններու, որոնք դուրսէն գեղեցիկ կ'երեւնան, եւ ներսէն մեռելներու սակորներով եւ ամէն կերպ պղծութիւնով լեցուն են: Նոյնպէս դուք դուրսէն մարդոց արգար կ'երեւնաք, ու ներսէն կեղծաւորութեամբ եւ անօրէնութեամբ լեցուն էք» — Մատթէոսի ԻԳ. 23-28:

Պօղոս, Եհովայի ներշնչեալ վկան, «վերջին օրեր»-ու մասին գրեց եւ մաքնաւորապէս յիշեց թէ՛ այդ ժամանակ՝ մեծապէս խարող մարդոց խումբ մը գոյութիւն պիտի ունենար, որոնք պիտի յայտարարէին թէ՛ զԱստուած կը ներկայացնեն, թէ՛ եւ իրապէս թշնամի Սատանան պիտի ներկայացնէին: «Եւ զայս գիտցիր որ վերջին օրերը չար ժամանակներ պիտի դան. վասն զի մարդիկ պիտի ըլլան անձնասէր, արծաթասէր, ամբարտաւան, հպարտ, հայհոյիչ, ծնողներու անհնազանդ, ապերախտ, ան-

սուրբ, անզուժ, անհաշտ, բանասրկու, անժուժ-կալ, դաժանաբարոյ, բարին չսիրող, մասնիչ, յանդուզն, գոռոզ, աւելի հեշտասէր քան թէ աստուածասէր. որովք աստուածպաշտութեան կերպարանքը ունին, բայց անոր գորութիւնը ուրացած են. եւ դուն ասունցմէ մէկդի կեցիր» — Բ. Տիմ. Գ. 1-5:

Այնպէս եզրակացնելու ենք թէ՛ առաքեալին այս առթիւ նկարագրած մարդիկը Հակաքրիստոսի մէկ մասը կը կազմեն: Եթէ կան մարդկային խմբակցութիւններ կամ կազմակերպութիւններ որոնք կ'ըսեն թէ զԱստուած կը ներկայացնեն եւ նոյն ատեն Աստուծոյ Պօսքին ու Անոր արդարութեան թաղաւորութեան բոլորովին հակառակ ընթացքի մը կը հետեւին, այն ատեն միայն մէկ բան կրնանք եզրակացնել, եւ ատիկա այն է թէ՛ մարդկային այդ տեսակ խմբակցութիւնները կամ կազմակերպութիւնները Հակաքրիստոսի մաս կը կազմեն: Թէ որ անոնք կը յայտարարեն թէ իրենք Տէրը կը ներկայացնեն եւ սակայն ճշմարտութիւնը չեն քարոզեր ժողովուրդին եւ իրենց ընթացքը հակառակ է Աստուծոյ եւ Քրիստոսի ու Անոր թաղաւորութեան, այդ պարագային անոնք խարողներ են: Թէ որ անոնք աստուածպաշտութեան կերպարանքը ունին եւ նոյն ատեն անոր զօրութիւնը կ'ուրանան՝ այն ատեն անոնք բացայայտօրէն Հակաքրիստոսի մասին Սբ. Գրոց տուած նշանակութեան ներքեւ կուզան, եւ Տիրոջ Պօսքը կ'ըսեն — «Ասոնցմէ մէկդի կեցիր»:

Առաքեալին յորդորանքին գիտակցօրէն կարենալ հետեւելու համար՝ անհրաժեշտ է որ ժողովուրդը իրողութիւններուն մասին տեղեկութիւն ունենայ: Այս հրատարակութեան միակ նպատակն է՝ իրողութիւնները ներկայացնել՝ ճշմարտութիւնը գիտնալ փափաքողներուն օգտին համար: Թող որոշապէս հասկցուի թէ՛ այս առթիւ ըսուելիքները հակաճառութիւն ստեղծելու կամ այս ու այն անհատը ծաղր ու ծանակի ենթարկելու նպատակաւ



չեն: Թէ որ ժողովուրդը խաբող հսկայ կազմակերպութիւն մ'ունի Սատանան՝ այդ պարագային՝ ժողովուրդը ճշմարտութեան տեղեկանալու պատեհութիւնը պէտք է ունենայ իր անհատական պաշտպանութեանը համար: Իշխող թէ իշխուող բոլոր ուղղամիտ անձինք պարտին ճշմարտութեան ցանկալ:

ԿՂԵՐՆԵՐԸ

Մեր օրուան կղերները՝ իբրև դասակարգ՝ որո՞ւ է որ կը ծառայեն, Եհովա Աստուծոյ ու Անոր Քրիստոսին թէ Սատանային: Անոնք չեն կրնար երկուքին ալ ծառայներն ըլլալ: «Չէ՞ք գիտեր թէ որու որ անձերնիդ ծառայ կ'ընծայէք հնազանդելու, թէ՛ մեղքի՝ որ մահուան կը տանի, եւ թէ՛ հնազանդելու՝ որ արդարութեան» (Հոովմ. 2. 16): «Չէք կրնար խմել Տիրոջը գաւաթը ու դեւերուն գաւաթը. չէք կրնար վայելիլ Տիրոջը սեղանէն ու դեւերուն սեղանէն»— Ա. Կորնթ. Ժ. 20, 21:

Վերելի հարցման ուղիղ պատասխանը ինչպէ՞ս կարելի է ստուգել: Յիսուս ցոյց տուաւ թէ ինչ կանոնի հետեւելու է այսպիսի պարագայի մը— «Ուրեմն իրենց պտուղէն պիտի ճանչնաք զանոնք: Ոչ թէ ամէն մէկը որ ինծի Տէր, Տէր, կ'ըսէ, պիտի մտնէ երկինքի թագաւորութիւնը, հապա անիկա՝ որ իմ երկնաւոր Հօրս կամքը կը կատարէ: Շատերը այն օրը ինծի պիտի ըսեն, Տէր, Տէր, չէ՞ որ քու անուովդ մարգարէութիւն ըրինք, ու քու անունովդ շատ հրաշքներ ըրինք: Եւ այն ատեն անոնց յայտնապէս պիտի ըսեմ թէ՛ Ես ընաւ ձեզ չէի ճանչնար. մէկդի դացէք քովէս դուք որ անօրէնութիւն կը գործէիք» (Մտթ. Ի. 20-23): Յիսուս դարձեալ ըսաւ. «Ասոր համար կ'ըսեմ ձեզի, որ Աստուծոյ թագաւորութիւնը ձեզմէ պիտի առնուի, ու այնպիսի ազգի մը պիտի տրուի՝ որ անոր պտուղները բերէ» —Մատթէոսի ԻԱ. 43:

Յիսուսի խօսքերը ցոյց կուտան թէ՛ թէեւ չատեր կ'ըսեն թէ Քրիստոսի հետեւորդներն են, սակայն եթէ թագաւորութեան պտուղները չեն բերեր, Անոր թագաւորութեան դէմ՝ եւ հետեւաբար Հակաքրիստոսին կողմէն են: Թագաւորութեան պտուղները կարենալ բերելու համար՝ անհատ մը պէտք է հաւատայ ու քարոզէ թէ Եհովան է միակ ճշմարիտ Աստուածը. թէ՛ Քրիստոս Յիսուս Անոր Որդին է, եւ թէ՛ Անոր թափած արիւնը՝ մեղքէն ու մահէն մարդուն փրկութեան զինը կը հայթայթէ. թէ՛ Քրիստոս յորդորեց իր հետեւողներուն՝ որ աշխարհէն անջատ ապրին եւ աղօթեն որ Աստուծոյ թագաւորութիւնը գայ ու Անոր կամքը ըլլայ ինչպէս երկինքի մէջ այնպէս ալ երկրիս վրայ. թէ՛ Քրիստոս խոստացաւ դարձեալ գալ ու Իր թագաւորութիւնը հաստատել. եւ թէ՛ մինչեւ այդ ատենը՝ բոլոր Իրեն ճշմարիտ հետեւողները բացարձակապէս Աստուծոյ ու Քրիստոսի նուիրուած պիտի ըլլան: Թագաւորութեան պտուղները բերողները անոնք են՝ զորոնք Աստուած Իր անուանը համար ընտրած է, եւ որոնք մինչեւ Անոր թագաւորութեան գալը Անոր անունը կը ներկայացնեն հաւատարմօրէն:

ԴՈՒՔ ԴԱՏԵՑԻՔ

Այս առթիւ կը ներկայացնենք զոյութիւն ունեցած հանրածանօթ իրողութիւնները: Մէջ կը բերենք նաեւ այդ իրողութիւններուն հետ կապ ունեցող Ս. Գրոց համարները: Ս. Գրոց համարները կը կազմեն այն կանոնը կամ օրէնքը որով ուղիղ եղրակացութեան մը կրնանք հասնիլ: Իրողութիւններն ու օրէնքը աչքի առջեւ ունենալով՝ թող ամէն ընթերցող անհատաբար վճռէ՝ թէ եկեղեցական կազմակերպութիւնները, մասնաւորապէս կղերները եւ անոնց հօտին գլխաւորները, Աստուծոյ թէ Սատանային կազմակերպութեան մաս կը կազմեն: Թէ որ իրողութիւններուն եւ օրէնքին վրայ հիմնուած այնպէս

վճիռնք թէ անոնք Սատանային կը ծառայեն ու անոր կազմակերպութեան մաս կը կազմեն, այն ժամանակ այնպէս պէտք է ընդունինք թէ անոնք Հակաքրիստոսին կողմէն են: Այդ եզրակացութեան հասնելով՝ ամէն արդարասէր անհատի առանձնաշնորհը եւ պարտականութիւնը կը դառնայ կեղծ ու սուցիչներէն մէկըի քաշուիլ եւ Նհովա Աստուծոյ Խօսքին ճշմարտութիւնը փնտռել: Ա՛լ հասած է ժամանակը՝ երբ ժողովուրդը պարտի կա՛մ Նհովա Աստուծոյ կողմը կանգնիլ կա՛մ Սատանային. եւ այդ բանը կարենալ ընելու համար պէտք է դանոնք ճշմարտութեան հետ շփման բերել: Ուղիղ եզրակացութեան մը հասնելու խնդրոյն մէջ ժողովուրդին օգնելու համար է որ հետեւեալ իրողութիւնները կը ներկայացնենք:

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐԻՒՆԸ ՈՒՐԱՅՈՂՆԵՐ

Կղերական երկու գլխաւոր դասակարգեր կան, որոնցմէ մին ինքզինքնին Արդիական կը կոչեն եւ միւսն ալ՝ Հիմնական: Այնպէս ենթադրենք թէ երկուքն ալ անկեղծ են: Այդ պարագային պէտք է ենթադրենք դարձեալ թէ չարաշուք ազդեցութիւն մը գոյութիւն ունեցած ըլլալու է՝ որ այդքան նշանակելի տարբերութիւն մը յառաջ կը բերէ անոնց միջեւ. ասկէ այն հարցումը կը ծագի թէ Անոնք որո՞ւ է որ կը ծառային: Արդիականներուն դերքը համառօտաբար հետեւեալ կերպով կ'արտայայտուի. Թէ՛ Նհովա Աստուած չէր որ ստեղծեց մարդը, հապա թէ մարդը բարեշրջական ընթացքի արդիւնք է. թէ՛ մարդուն ստեղծման եւ մեղքի մէջ իյնալուն մասին Աստուածաշունչին ընծայած ծանօթութիւնը սուտ է եւ հաւատալու չէ. թէ՛ մարդ Փրկիչի երբէք պէտք չէ ունեցած ու պէտք ալ չունի, եւ հետեւաբար Գողգոթայի վրայ Յիսուս Քրիստոսի թափած արիւնը բնաւ իրական արժէք չունի մարդկային ազգին հա-

մար: Այդ պատճառաւ անոնք Աստուծոյ Խօսքը վէճի առարկայ կ'ընեն:

Ստորեւ կը ներկայացնենք բարեշրջութեան հարցին շուրջ կարգ մը կղերներուն ըրած արտայայտութիւնները, արտայայտութիւններ որոնք հակառակ են մարդուն ստեղծման մասին Աստուածաշունչին ըրած արտայայտութիւններուն: Այս ծանօթութիւնները կուտանք որպէս զի ժողովուրդը կարենայ որոշ կերպով վճռել թէ Արդիականները զո՞վ կը ներկայացնեն:

Չարիք Տարվին բարեշրջութեան գլխաւոր ջատադուներէն մին էր: Նա մերժեց մարդուն Աստուծոյ ստեղծուելուն մասին Աստուածաշունչին ըրած յայտարարութիւնը եւ այն տեսութիւնը յառաջ քշեց թէ մարդը կենդանական ստորադաս վիճակէ մը բարեշրջուեցաւ:

Տօքթ. Ս. Փ. Քէտմըն, Ամերիկայի Եկեղեցիներու Դաշնակցութեան գլխաւոր անձնաւորութիւնը, Տարվինականութեան ազդեցութեան մասին գրելով (Տես Գլուխ ԺԴ, Բարեշրջութիւն կամ Քրիստոնէութիւն անուն գրքին) կ'ըսէ.

«Տարվինը առաջինն էր որ ստացաւ ու փոխանցեց լոյս մը, որ առանց իրեն՝ կարելի է թէ անորոշապէս յայտարարուի: ... Հետեւաբար՝ Տարվինի կը պատկանի՝ կեանքի անընդհատ եւ անդիմադրելի տեսականութեան վսեմ խորհուրդով՝ իր օրուան եւ հետագայ սերունդները պատուաստելու պատիւը. կեանք մը անբաժան յատկութիւններով՝ որ իր տեսականութիւնը կը պահպանէ. կեանք մը որ երբէք ետ չդառնար, եւ միշտ ստորինէն դէպի բարձրագոյնը կը յառաջանայ: ... Իր շարժանական խորհրդածութեան ուժգնութիւնը՝ ի վերջոյ անջատեց զինք Աստուածաշունչի եւ զիտական աւանդութեանց խարխիւլէն: ... Տարվինեան բացարձակութիւնը կը զոհացնէ զիս՝ իրբւե իմ ցարդ զիտցածիս մեծագոյնը՝ Ղեկավարող Մտքին ստորգելիներուն նկատմամբ: ... Թէ որ Եկեղեցին աշալուրջ ըլլար պարագաներու քղանցքէն բռնելու՝ Տարվինականութեան զիտը օղտակար ծառայութիւն մատուցած պիտի ըլլար իրեն»:

Պատ. Հէրի Էմըրսոն Ծօտիք վերոյիշեալ զըրբի Գլուխ ԺԶ. -ին մէջ կ'ըսէ.

«Մեր ամենամեծ՝ ինչպէս նաև ամենախեղճ ուսուցիչները, խորապէս կրօնասէրները՝ ինչպէս նաև արհամարհանքոտ անկրօնները, բարեչըջութեան կը հաւատան։... Անկասկած՝ ներքին Աստուծոյ մը դաղափարը, որ բարեչըջութեան Աստուծան է, անհունօրէն աւելի վսեմ է քան պատահական հրաշալորքը որ հին աստուածաբանութեան մը Աստուծան է»:

**Անդլիոյ Պըրմինկհէմ քաղաքին եպիսկոպոսը իր բեմէն ըսաւ .**

«Տարվինի այն յայտարարութիւնը՝ թէ մարդը կապիկներէ յոռաջ եկած է՝ աւելի քան յիսուն տարուան մանրակրկիտ շննութեան փորձին տոկոցած է։... Աճող դիտութիւնը եւ ինամոտ հետադատութիւնը պարզապէս անոր ճամբարտութիւնը հաստատած են։ Ատոր որպէս արդիւնք՝ Աղամի ու Եւայի ըստեղծման, անոնց սկզբնական անմեղութեան եւ անկման պատմութիւնները պարզ հէքեաքներու վերածուած են։ Տարվինի յողթանակները բնաջինջ բրած են աստուածաբանութեան ամբողջ դաղափարը»:

**Այս առթիւ պատշաճ կը թուին Տքթ. Ա. Ո. Սթէյթլըն-ի խօսքերը .**

«Ես աստուածաբանական դպրոցներու մէջ դաստիարակուած եմ։ Ինծի համար դժուար է ըմբռնել՝ որ քահանայ մը կամ քարոզիչ մը իրեն համար սահմանուած կրթութիւնը ստանալ վերջ՝ կարենայ դուրս գալ իրրեւ ուղղամիտ անհատ մը»:

**Լրագիրները հետեւեալը կը տեղեկագրեն Սան Ֆրանսիսքօյի Առաջին Ժողովական Եկեղեցւոյ երէց Զ. ձ. Հօբինգ-ի մասին .**

«Հովիւր այն թևաղբութիւնը ըրաւ թէ՝ արդի եկեղեցին դիմադրաւոր առեղծուածները լուծելու համար՝ քաջաբար ընդունելու է գիտական այն տեսութիւնը թէ մարդը նախապէս ստորադաս կենդանիէ մը իր ներկայ վիճակին բարձրացաւ։ անիկա յայտարարեց թէ՝ կաղմակերպեալ կրօնքը՝ մարդկութեան կեանքին մէջ իրրեւ զօրաւոր ազդակ՝ իր դիրքը երբէք պիտի չվերստանայ՝ մինչև որ՝ Ծննդոցի գրքին մէջ մարդուն ստեղծման մասին տրուած պատմութեան նկատմամբ իր ունեցած հաւատքէն չհրաժարի։ Եկեղեցին այժմ կը տատամսի եղբրական աշխարհի մը մէջ»:

**Նիւ Եորքի Պատ. ձ. Հ. Հօլմզ, ըստ Լրագիրներու տուած տեղեկութեան, ըսած է .**

«Անցեալ 2000 տարիներու շրջանին շատ բաներ տեղի ունեցած են։ Պօղոս առաքեալի հողերանութիւնը ա՛յլևս անցած է։ Արդի մարդը կը նստի դիտնականին, աստղագէտին, ընկերաբանին եւ կենսաբանին ոտքին շով։ Այսօրուան մարդը կենսաբանութիւն կը կարդայ եւ ոչ թէ աստուածաբանութիւն։ Արդի մարդը կը մերժէ հաւատալ թէ ունէ սուրբ բան գոյութիւն ունի։... Յուդայականութեան եւ Քրիստոնէութեան առջև դտնուող մէղին մէջէն նոր կրօնք մը պիտի ձեւակերպուի։ Այս նոր կրօնքը՝ ամէն մասնաշատուկ կրօնք իրրեւ աստուածային ու սուրբ բան պիտի ճանչնայ։ Ան մէկ աստուած մը եւ մէկ հաւատք մը պիտի չունենայ»:

**Ըստ Նիւ Եորք Թայմզ-ի տեղեկագրութեան՝ Շիքակօյի Համալսարանին Աստուածաբանական Դպրոցին Ուսուցչապետ Ծ. Մէթիլզ սպայէս ըսած է .**

«Կրնա՞նք Քրիստոնեայ ըլլալ եւ նոյն ատեն մեր իմացականութիւնը դործածել, եւ կամ թէ պէ՞տք է մեր իմացականութիւնը զրհենք ի սէր մեր հաւատքին։ Հարկ չկայ որ Քրիստոնէութիւնը Աստուածաշունչով սահմանափակուի»:

**Ըստ Լրագիրներու տուած տեղեկութեան՝ Տէ Մօյն-ի մէջ՝ յիսունըթ Երիցական Համալսարաններու եւ դուլէճներու նախագահներու խորհրդաժողովին առջև՝ Տքթ. Մըք Էֆի հետեւեալ յայտարարութիւնը ըրած է .**

«Բարեչըջութեան աստուածը կեանքի մէջ աւելի հզօր ազդակ մըն է քան Աստուածաշունչին աստուածը»:

Արդիական երեւելի կղերներու յայտարարութեանց բոլորովին հակառակ՝ Աստուածաշունչը կ'ըսէ . «Եւ Տէր Աստուած գետնին հողէն շինեց մարդը, եւ անոր ոնգունքներուն կենդանութեան շունչ փչեց, ու մարդը կենդանի հոգի եղաւ»— Ծննդ. Բ. 7:

Եհովայի բոլոր գործերը կատարեալ են (Երկրորդ Օրինաց ԼԲ. 4): «Այս է Աղամի աղգարանութեան գիրքը։ Այն օրը որ Աստուած մարդը ստեղծեց, Աստուծոյ պատկերովն ըրաւ դանիկա. արու եւ էգ ստեղծեց դանոնք եւ օրհնեց դանոնք, ու անոնց ստեղծման օրը անոնց անունը Աղամ գրաւ»— Ծննդոց Ե. 1, 2:

Մարդը Աստուծոյ օրէնքը դրժեց, մահուան դատապարտուեցաւ ու Եղեմէն վտարուեցաւ (Ծննդոց Բ. 17, Գ. 15-24): «Վասն զի ինչպէս մարդէ մը մեղքը աշխարհ մտաւ, եւ այն մեղքէն մահը, եւ այնպէս ամէն մարդոց վրայ տարածուեցաւ մահը, քանզի ամէնը մեղանչեցին» (Հռովմ. Ե. 12): Աստուած խոստացաւ մարդը մահէն փրկել (Ովսեայ ԺԳ. 14): Յիսուս աշխարհիս վրայ եկաւ ու մարդուն Փրկիչը եղաւ (Մատթ. Ի. 28, Յովհ. Ժ. 10): Յիսուսի արեւան հաւատարմ է որ կարելի է վրկութիւն ստանալ (Յովհ. Գ. 16, Գործք Դ. 12, Ա. Տիմ. Բ. 3-6): Այն խոստումը արուած է թէ՛ մարդիկ կեանքի ու վերահաստատութեան օրհնութիւնները պիտի ստանան՝ երբ Տէր Յիսուս Քրիստոս երկրորդ անգամ գալով Իր թագաւորութիւնը հաստատէ— Բ. Տիմոթէոսի Դ. 1:

Արդիական կղերներուն վերոյիշեալ յայտարարութիւնները բաղդատելով Աստուծոյ Ոսօքէն՝ մէջ բերուած վերելի բացորոշ յայտարարութիւններուն հետ՝ թո՛ղ վճռուի այն հարցը թէ՛ այս քարոզիչները զո՞վ կը ներկայացնեն եւ որո՞ւ է որ կը ծառայեն. Աստուծո՞յ թէ՛ Սատանային: Այս առթիւ նկատի առնենք նաեւ Ս. Գրքէն մէջ բերուած հետեւեալ խօսքերը.

«Ոչ ոք չըրկէ ձեզ մրցանակիցը՝ ինքնակամ խոնարհութիւնով եւ հրեշտակների կրօնքով՝ միջամուխ լինելով այն բաներին որ չէ տեսած եւ զուր տեղը գոտոզացած է իր մարմնաւոր մտքումը»—Կոլոսացիս Բ. 18— Ըստ Կովկասահայ Ս. Գրոց:

«Քայց հոգին յայտնի կ'ըսէ թէ՛ վերջին ատենները ոմանք հաւատքէն պիտի ապստամբին, եւ մուրեցուցիչ ոգիներու ու դեւերու ուսմունքներուն ուշադրութիւն պիտի տան, ստախօսներուն կեղծաւորութիւնովը, որոնց խղճմտանքը խանձուած է»— Ա. Տիմոթէոսի Դ. 1, 2:

«Եւ դայս դիտցիր որ վերջին օրերը չար ժամանակներ պիտի գան: Վասն զի մարդիկ պիտի ըլլան... մատնիչ, յանդուգն, դոռող, աւելի հեշտասէր քան թէ Աստուածասէր. որոնք աստուածաշարժութեան կերպարանքը ունին, բայց անոր դորութիւնը ուրացած են. եւ դուն ասոնցմէ մէկդի կեցիր»— Բ. Տիմոթէոսի Գ. 1-5:

Առաքեալը ճիշդ այս բանին դէմ ազդարարեց, եւ ըսաւ թէ՛ մարդիկ պիտի ելլեն ու այնպէս ցոյց պիտի տան՝ թէ՛ արդարութիւնը կը ներկայացնեն, մինչդեռ իրականութեան մէջ Սատանան է որ կը ներկայացնեն: «Քանզի դիտեմ որ իմ դատուելէս ետքը ձեր մէջ յափշտակիչ դայցեր պիտի մտնեն, որոնք պիտի չխնայեն հօտին» (Գործք Ի. 29): «Եւ զարմանք մը չէ. վասն զի ինք Սատանան ալ լուսաւոր հրեշտակի կերպարանք կ'առնէ, ալ մեծ բան մը չէ, որ անոր պաշտօնեաներն ալ արդարութեան պաշտօնեաներու նման կերպարանք կ'առնեն. որոնց վերջը իրենց գործերուն համեմատ պիտի ըլլայ»— Բ. Կորնթացիս ԺԱ. 14, 15:

Եկեղեցական կազմերու մէջ շատ մը գլխաւորներ կան՝ որոնք կը սիրեն այդ տեսակ ուսուցիչներ ունենալ, ինչու որ իրենց անձնական պարտաւորութիւններուն մասին ոեւէ բան չեն խօսիր անոնք: Առաքեալը այսպիսիներէ զդուշացուց երբ գրեց. «Վասն զի ժամանակ պիտի դայ որ ողջամիտ վարդապետութեանը պիտի չհամբերեն, հապա իրենց լսելիքին ետքովը իրենց ցանկութիւններուն համեմատ վարդապետներ պիտի դիզեն իրենց, եւ ճշմարտութենէ ազանջներնին պիտի զարձնեն, եւ առասպելներու ետեւէ պիտի մուրթին» (բարեշրջութիւնը առասպել է)— Բ. Տիմ. Դ. 3, 4:

Աստուած նախատեսեց եւ իր ներշնչեալ գրողներուն միջոցաւ նախաձայնեց թէ՛ վերջին օրերը այս տեսակ «կորուսիչ հերձուածողութիւններ» յառաջ պիտի քշուին՝ որպէս զի ոչնչացնեն Իրեն եւ

Իր Խօսքին նկատմամբ ունէ հաւատք. ուստի գլը-  
ուեցաւ. «Բայց սուտ մարգարէներ ալ կ'ըլլային ժո-  
ղովուրդին մէջ, ինչպէս ձեր մէջ ալ սուտ վարդա-  
պետներ պիտի ըլլան, որոնք դադուուկ պիտի մրա-  
ցընեն կորուսիչ հերձուածողութիւններ, ու զիրեմի  
ծախու առնող Տէրը ուրանալով՝ իրենց վրայ պի-  
տի բերեն արագահաս կորուստը (ճշնչացումը, ըստ  
Անգլ. Ս. Գրոց): Եւ շատերը անոնց կորստական  
ընթացքներուն ետեւէն պիտի երթան, որոնց հա-  
մար ճշմարտութեան ճամբան պիտի հայհոյուի»—  
Բ. Պետրոսի Բ. 1, 2:

Եթէ Աստուած մարդը կատարեալ չտանդծեց՝  
այդ պարագային անշուշտ մարդը անկում չունե-  
ցաւ: Եթէ մարդը անկում չունեցաւ՝ ան Փրկիչի  
պէտք չունի, հետեւաբար Յիսուսի արիւնը ունէ  
արժէք չունի: Վճռաբար կրնանք յայտարարել թէ՛  
Արդիականները իրենց տեսութիւններովը ուրանա-  
լով ստեղծագործութեան մասին Ս. Գրոց բնա-  
յած պատմութիւնը՝ բացարձակապէտ կը մերժեն  
Քրիստոսի արիւնը, որ մարդուն փրկութեան միակ  
միջոցն է: Քանի որ Սատանան ստախօսներուն եւ  
խարբաններուն զլխաւորն է, եւ իր կազմակերպու-  
թիւնը Հակաքրիստոս է, պէտք է յայտնի ըլլայ թէ  
բոլոր անոնք որ Քրիստոսի կը հակառակին եւ մար-  
դուն օրհնութեան համար պատրաստած Անոր թա-  
գաւորութիւնը կ'ուրանան, Հակաքրիստոսին կող-  
մէն են, եւ հետեւաբար ժողովուրդը անոնց պէտք  
չէ վստահի իբրեւ իրենց ուսուցիչները:

**ՔՐԻՍՏՈՆԵՍ ԱՇԽԱՐՀ**

Քրիստոնեայ Աշխարհ բառերը անպատշաճօրէն  
գործածուած են: Բառազէտները այնպէս կը մեկ-  
նարանեն, եւ ընդհանրապէս այնպէս կը հասկնան,  
թէ այդ անունը երկրիս Քրիստոնեայ եւ Քրիստոսի  
քայլերուն հետեւող կառավարութիւնները կը ներ-  
կայացնէ: Այդ բառերը «Քրիստոսի Թագաւորու-

թեան» բառերուն որպէս հոմանիչ գործածուած են:  
Կղերները ժողովուրդին այնպէս հաւատացուցած են  
թէ՛ երկրիս զլխաւոր ազգերէն շատեր Քրիստոսի  
Թագաւորութիւնը կը կազմեն, եւ հետեւաբար այդ  
ազգերը Քրիստոնեայ Աշխարհ կոչած են: Ասիկա  
հակառակողին, Սատանային, բացայայտ խարհ-  
ութիւնն է: Քրիստոս Յիսուս երկրի վրայ եղած  
ատեն ըսաւ— Իմ Թագաւորութիւնս այս աշխարհէն  
չէ: Իմ Թագաւորութիւնս ապագային է: Նա յոր-  
դոնց իր աշակերտները որ Աստուծոյ աղօթեն՝  
«Քու Թագաւորութիւնդ դայ. քու կամքդ ըլլայ,  
ինչպէս երկինքը՝ նոյնպէս երկրի վրայ» (Յովհան-  
նու ԺԼ. 36, Մատթ. 9. 10): Նա յայտնեց իր աշա-  
կերտներուն թէ ինք պիտի վերադառնար եւ իր թա-  
գաւորութիւնը հաստատէր:

Ս. Գիրքը որոշ կերպով կ'ուսուցանէ թէ՛ Աս-  
տուծոյ Թագաւորութիւնը կամ կառավարութիւնը  
Տիրոջ երկրորդ անգամ եկած ատեն պիտի հաս-  
տատուի: Երբ Քրիստոս երկրիս գործերուն բովան-  
դակ իշխանութիւնը ձեռք կ'առնէ՝ այն ժամանակ  
Սատանան բոլորովին դուրս պիտի վտարուի եւ եր-  
կրիս կառավարութիւնը արդարադատ պիտի ըլլայ:  
Քրիստոսի Թագաւորութիւնը չկրնար ապականած  
կառավարութիւն մ'ըլլալ:

Ընդհանուրին ծանօթ է թէ՛ երկրիս բոլոր ազ-  
գերուն մէջ մեծ ապականութիւն եւ յոռի վարչու-  
թիւն գոյութիւն ունին. եւ ասիկա մասնաւորապէս  
ճշմարիտ է Քրիստոնեայ Աշխարհ կոչուած ազգե-  
րուն մէջ: Յիսուս Քրիստոս պատուէր տուաւ որ իր  
Թագաւորութենէն եղողները սպանութիւն չընեն  
(Մատթ. Ե. 21, 22): Գրուած է նմանապէս թէ մար-  
դասպան մը Աստուծոյ Թագաւորութեան մէջ բա-  
ժին պիտի չունենայ (Գաղ. Ե. 21, Ա. Յովհ. Գ. 15):  
1914-ին սկսած Համաշխարհային Պատերազմին  
զլխաւոր մասնակցողներն էին Քրիստոնեայ կոչ-  
ուած ազգերը: Այդ բոլոր ազգերուն մէջ դտնուած

կղերները ժողովուրդը ստիպեցին որ սպանութիւն ընեն: Ի հարկէ անոնք այդ բանը ընելով Քրիստոսի չէ որ կը ծառայէին, հապա զանոնք պէտք է նկատենք՝ առաջին սպանութիւնը դործող Սատանային ծառաները— Յովհ. Ը. 44:

1օյտ ձօրձ, 1928, Յունիս 25-ին Լոնտոնի Ուէլշ Եկեղեցիին մէջ խօսելով՝ պատերազմին նկատմամբ կղերներուն ունեցած պատասխանատուութեան մասին ըսաւ.

«Եւրոպայի նայեցէք ներկայիս: Մեր ունեցած ահաւոր դասէն վերջ՝ աւելի մեծ թիւով մատաղ եւ առողջ երիտասարդներու զիրար սպանել կը սորվեցնեն ու կը վարժեցնեն քան աշխարհի հիմերը դրուելէն յետոյ ունէ ատեն: Պատերազմին սիսած ժամանակ վարչապետ եղած ըլլալով՝ ես կը յայտարարեմ թէ՛ թէ որ Քրիստոնեայ Աշխարհի եկեղեցիները ըսէին, 'կ'անդ առէք: Այս մարդասպանութիւնը պէտք չէ՛ որ սկսէ', ոչ մէկ վեհապետ համարձակութիւնը պիտի ունենար աշխարհը պատերազմի մէջ մխրճելու»:

Կղերները Համաշխարհային Պատերազմը ջատագովեցին եւ երիտասարդները ստիպեցին որ խրամատները երթան: Կղերներն իրենց այդ արարքով զո՞վ ներկայացուցին:

Համաշխարհային Պատերազմի տեւողութեան, պատերազմին մասնակցող շատ մը երկիրներու մէջ կը ընակէին Քրիստոս Յիսուսի ճշմարիտ հետեւորդներ, որոնք կը հաւատային թէ պէտք է տառապէս հնազանդին «Սպանութիւն մի՛ ընեք» պատուէրին: Նախամեծար համարելով մարդոցմէ աւելի Տիրոջ հնազանդիլ, եւ հետեւաբար հրաժարելով իրենց ընկեր արարածները սպաննելէ, այդ պարզ Քրիստոնեայ անհատները մերժեցին դէնք կրել ու սպաննել: Անոնք ստոր համար հալածուեցան, ընկերակցութիւններէ դուրս ձգուեցան, շատերը բանտարկուեցան, իսկ ուրիշներ ալ անդթօրէն ծեծուեցան եւ սպաննուեցան: Այդ Քրիստոնեաներուն դէմ մղուած հալածանքին առաջնորդները կղերներն էին: Պրուքլին, Ն. Ե., Մ. Ս. Գ. Ո. Միութեան

կողմէ հրատարակուած Թիք Կօլտըն էյն անունով պարբերաթերթին 27-րդ թիւը, մանրամասն փաստերով երեւան կը բերէ այն դէրը՝ զոր կղերներէն շատեր կատարեցին այդ հալածանքներուն մէջ: Անշուշտ Տէրը զինք ներկայացնող ունէ մէկը չհալածէր՝ Իր պատուէրին հնազանդած ըլլալուն համար: Ուրեմն, այդ հալածանքին մէջ կղերները զո՞վ ներկայացուցին, զԱստուած թէ Սատանան:

Աստուածաշունչը՝ Բարեյունէն սկսեալ մինչեւ հիմա գոյութիւն ունեցող աշխարհակալ մեծ պետութիւնները կը նկարագրէ, եւ անոնց բոլորին ալ «գազան» խորհրդարանական անունը կուտայ, այդ կառավարութիւններուն անխղճութեանը պատճառաւ (Դանիէլի է. 3-28, Յայտ. Ժէ. 13): Այդ բոլոր կառավարութիւնները չարին (Սատանային) անբեւոյթ իշխանութեան ներքեւ եղած են: «Գիտենք որ մենք (Քրիստոսի հետեւողները) Աստուծմէ ենք, ու բոլոր աշխարհ չարին (չար էակին) մէջ է» (Ա. Յովհ. Ե. 19): Կղերները երկրիս բոլոր կառավարութիւններու քաղաքականութեանց մասնակից եղած են, մասնաւորապէս անցեալ հազար հինգ հարիւր տարիներու տեւողութեան:

Ազգերու Ընկերակցութիւնը դաշինք մըն է, զոր կազմած եւ որուն մասնակցած են Քրիստոնէութիւն դաւանող շատ մը ազգեր, ասոնց անբեւոյթ իշխաններ, սակայն, իսկապէս Բանտարկու Սատանան է: Ս. Գիրքը որոշապէս գուշակած է դաշնակցութիւնը կամ Ազգերու Ընկերակցութիւնը (Եսայ. Ը. 9,10): Այդ կազմակերպութիւնը մատնանշուած է որպէս այն «գազան»-ը որ դէմ է Քրիստոսի, եւ կը պատերազմի Քրիստոսի ու Անոր հետ եղողներուն դէմ: Ուստի, որոշ է թէ՛ Ազգերու Ընկերակցութիւնը Սատանային գործիքն է, Հակաքրիստոսին կողմէն է եւ Քրիստոսի թագաւորութեան հակառակ (Յայտնութեան Ժէ. 13-15): Ազգերու Ընկերակցութիւնը Սատանային արտադրութիւնն է, զոր նա կազմա-

կերպած է ժողովուրդը իր իշխանութեան տակ պահելու նպատակաւ: Շատ մը ուղղամիտ անհատներ խարուելով՝ մղուած են Ազգերու Ընկերակցութեան օգնութիւն ընծայելու: Անոնք մեղադրելի չեն: Պէտք է մեղադրել զայն որ արժանի է մեղադրանքի, ատիկա է՝ մարդուն թշնամին, Բանսարկու Սատանան: Սատանան շատ մը կղերներու աչքերը կուրացուց եւ մղեց զանոնք որ Ազգերու Ընկերակցութիւնը պաշտպանեն: Հետեւեալը այն որոշումն է՝ զոր Եկեղեցիներու Դաշնակցութեան ժողովը որդեգրեց Ազգերու Ընկերակցութեան կազմուած ժամանակ.

«Այլ հասած է աշխարհը ճշմարտութեան, իրաւունքի, արդարութեան եւ մարդկութեան համար կազմակերպելու ժամանակը: Այս նպատակաւ՝ իբրեւ Քրիստոնեաներ կը թախանձենք որ յառաջիկայ Ոսղաղութեան Ոորհրդաժողովին մէջ Ազատ Ազգերու Ընկերակցութիւն մը հաստատուի: Այդպիսի ընկերակցութիւն մը խաղաղութեան միջոց մը չէ միայն. ան՝ աւելի՛՝ երկրի վրայ Աստուծոյ Թագաւորութեան քաղաքական արտայայտութիւնն է: Ազգերու Ընկերակցութեան արմատները Աւետարանին մէջ կը գտնուին: Աւետարանին նման՝ անոր նպատակակէտն է՝ 'Երկրի վրայ խաղաղութիւն, մարդոց մէջ հաճութիւն': Աւետարանին նման՝ անոր կոչը տիեզերական է:

«Հերոսական մեռեալները ի զուր մեռած պիտի ըլլան՝ թէ որ յաղթութենէ չձագի նոր երկինք մը ու նոր երկիր մը, որոնց մէջ արդարութիւն կը բնակի— Բ. Պետրոսի Գ. 13:

«Եկեղեցին (անուանականը) կրնայ հաճութեան ոգին ընծայել, առանց որուն ոչ մէկ Ազգերու Ընկերակցութիւն կըրնայ կանգուն մնալ»:

Երբ կը յայտարարէին թէ Սատանային այդ արտադրութիւնը երկրիս վրայ Աստուծոյ Թագաւորութեան քաղաքական արտայայտութիւնն է՝ այդ որոշումը որդեգրողները անշուշտ Սատանան է որ կը ներկայացնէին եւ ոչ թէ Եհովան. այդ բանը գիտակցօրէն կամ անգիտակցօրէն ըրած ըլլալն ինդիքը չփոխել— «Անոր ծառաներն էք որուն որ ծառայութիւն կը մատուցանէք»— Հոովմ. 2. 16:

Եհովա Աստուածն ու Անոր Քրիստոսը Հանրապետական կուսակցութեան կողմէն են թէ Ռամկա-

վարական կուսակցութեան: Իրենք զիրենք որպէս Տիրոջ ներկայացուցիչ յայտարարող կղերներուն մէկ դասակարգը Հանրապետականներուն կը միանայ. ուրիշներ Ռամկավարականներուն կը միանան. եւ բոլորն ալ իրենց պատկանած կուսակցութեան յաջողութեան համար կ'աղօթեն: Հետեւաբար՝ այդ կուսակցութիւններէն մէկուն կամ միւսին նպաստող կղերները կը մասնակցին աշխարհային այնպիսի քաղաքականութեանց՝ որոնք Սատանային կազմակերպութեան մաս կը կազմեն: Ասիկա իրողութիւն ըլլալով՝ կղերները Հակաքրիստոսի հետ դաշնակցած են, որովհետեւ հակառակ են Քրիստոսի Թագաւորութեան:

1928, Փետրուար 27-ին՝ Եիքակոյի մէջ տեղի ունեցած Եկեղեցական Դաշնակցութեան քարոզչիներու մէկ ժողովին մէջ՝ հետեւեալ որոշումը որդեգրուեցաւ.

«Որոշուած է՝ Որ Եիքակոյի Եկեղեցական Դաշնակցութեան միացած քարոզիչներու ժողովը հրաւեր տայ ժողովուրդին, որ Չորեքշաբթի, Մարտ 7-ին, իրենց պաշտամունքի պատկանեալ վայրերուն մէջ համախմբուին, եւ աղօթեն Ամենակարողն Աստուծոյ՝ որ ոյժ ու խորատեսութիւն չնորհէ մեր պարտականութիւնը կատարելու՝ Ապրիլ 10-ի նախնական ընտրութեան ատեն հանրային պաշտօններու համար մարդիկ ընտրելու գործին մէջ»:

Միթէ այդ քարոզիչները Քրիստոսի միջոցաւ հաստատուելիք Աստուծոյ Թագաւորութեան նկատմամբ համակրութիւն ցոյց կուտային՞ երբ այդպէս հասարակաց աղօթքի համար կոչ կ'ուղղէին. թէ ոչ՞ անոնք կը ջանային նեցուկ ըլլալ աներևոյթ իշխանին, Բանսարկու Սատանային, որ ներկայիս այս աշխարհի աստուածն է: Եթէ անոնք իսկապէս Տէրը կը ներկայացնէին, միթէ անոնք Յիսուսի պատուէրին պիտի չհետեւէին՞, եւ փոխանակ աղօթելու որ զիտնան թէ մարդիկ ինչպէս պաշտօնի ընտրեն, միթէ պիտի չաղօթէին՞ այնպէս ինչպէս

որ Յիսուս սորվեցուց աղօթել— «Բու թաղաւորութիւնդ դայ. քու կամքդ ըլլայ, ինչպէս երկինքը՝ նոյնպէս երկրի վրայ»:

ԹՇՆԱՄԻՆ

Բանասրկու Սատանան ամէն արդարութեան թշնամի է (Գործք ԺԳ. 10): Անիկա է այն թշնամին որ չփութութիւն ու անհամաձայնութիւն (սերմանած է երկրիս ժողովուրդներուն մէջ (Մատթ. ԺԳ. 39): Նա է Աստուծոյ ու Անոր Քրիստոսին գլխաւոր թըշնամին (Սաղմ. ԿԹ. 9, Յովհ. ԺԴ. 30): Սատանան մարդուն ամենազատ թշնամին է՝ ինչու որ նա մարդկութեան տառապանք ու մահ բերաւ: Նա կը դերներու թշնամին է՝ ինչու որ անոնցմէ շատերը խրաժ է: Ամէն կազմակերպութիւն որ Քրիստոսի թաղաւորութեան դէմ է՝ թշնամիին կամ Հակաքրիստոսին կողմնակից է: Աստուած Իր թաղաւորութեան ժամանակ ամէն թշնամի, նոյնիսկ մահը, պիտի ոչնչացնէ Քրիստոսի միջոցաւ (Ա. Կորնթաացիս ԺԵ. 26): Քրիստոսի միջոցաւ նա պիտի ոչնչացնէ Սատանային բոլոր գործերը եւ յետոյ պիտի ոչնչացնէ նմանապէս Սատանան (Ա. Յովհ. Գ. 8, Եբրայեցիս Բ. 14): Այդպէս ընելով Քրիստոս երկիրը պիտի մաքրագործէ եւ զայն բնակութեան յարմար վայրի մը պիտի վերածէ: Պատերազմները ա՛լ պիտի զաղբին ու ժողովուրդները ա՛լ պատերազմ պիտի չսորվին (Եսայ. Բ. 2-4): Բռնապետութիւնը պիտի վերջ գտնէ եւ բոլոր բռնակալները պիտի խորտակուին (Սաղմ. ՀԲ. 4, Եսայ. ԺԴ. 4): Այն իրողութիւնը թէ երկրիս կառավարութիւնները ներկայիս ժողովուրդները կը ճնշեն եւ անոնց վրայ ծանր բեռներ կը դնեն՝ ուրիշ ապացոյց մըն է թէ Սատանան է այս աշխարհի մեծ բռնաւորը եւ անբեւեռոյթ իշխանը: Ան ցոյց կուտայ նմանապէս թէ՛ ներկայ բռնապետական դրութիւններուն նեցուկ եւ՝ զոչ կղերները Սատանային է որ կը ծառայեն, տար-

բերութիւն չընեն թէ ատիկա կ'ընեն կամաւորապէս թէ կուրօրէն:

Նհովան մարդուն իրական Բարեկամն ու Բարերարն է: Երկար ատեն առաջ նա խոստացաւ երկրիս բոլոր ազգերը օրհնել, եւ յայտնեց թէ այդ օրհնութիւնները պիտի դային այն ատեն երբ Իր օծեալ Որդին, Քրիստոս Յիսուս, աշխարհիս իշխանութիւնը Իր ձեռքն առնէր (Ծննդ. ԺԲ. 3, Գաղատացիս Գ. 16, 27-29): Աստուած միշտ Իր խոստումը կը կատարէ (Եսայ. ԾԵ. 11, ՈՁ. 11): Աստուած Իր Ոսօքին միջոցաւ կը յայտարարէ թէ՛ ժողովուրդը ճշմարտութիւնը ճշգրտօրէն պիտի սորվի եւ թէ ամէն ոք՝ պղտիկէն մինչեւ մեծը՝ զինք պիտի ճանչնան— Ա. Տիմ. Բ. 3, 4, Երեմ. ԼԱ. 34:

Հասած է ժամանակը որ ժողովուրդը սկսի ճըշմարտութեան տեղեկանալ: Աստուած կը պատուիրէ որ՝ մօտալուտ Արմազեզոնի մեծ պատերազմին մէջ Սատանային ու անոր կազմակերպութեան դէմ Իր բարկութիւնը արտայայտելէ առաջ՝ երկրիս ժողովուրդներուն ու ազգերուն վկայութիւն տրուի, որպէս զի անոնք պատեհութիւն ունենան զինք փրկուելու եւ մեծ ընդհարումին ժամանակ պահպանուելու (Մատթ. ԻԴ. 14, Սուր. Բ. 2, 3): Ուստի՝ արդարութիւն սիրող եւ իր նմաններուն բարեւալութեանը համար փափաքող իւրաքանչիւր այր եւ կին մարդու վրայ պարտք կը ծանրանայ՝ մեր օրուան դէպքերուն նշանակութիւնը իր զբացիներուն պարզել: Ժողովուրդը պէտք է գիտնայ թէ Բանասրկու Սատանան վաղուց ի վեր այս աշխարհի աստուածը եղած է եւ թէ նա է իրենց գլխաւոր թըշնամին ու բռնակալը: Անոնք պէտք է գիտնան թէ Նհովան է միակ ճշմարիտ Աստուածը եւ մարդուն մեծ Բարեկամն ու Բարերարը. եւ թէ Քրիստոս Յիսուս, Անոր օծեալ Թագաւորը, Իր թաղաւորութեան միջոցաւ ժողովուրդին պիտի ընծայէ այն բաները՝ որոնք անոնք ի սրտէ կը փափաքին ունե-



նալ: Աստուած Իր Թագաւորը արդէն իսկ Իր դահին վրայ բաղմեցուցած է. եւ Նա կը յայտնէ թէ Արմազեղոնի պատերազմը քիչ ատենէն վրայ պիտի հասնի— Սաղմոսաց Բ. 6-10:

Այժմ «Տիրոջ օր»-ուան մէջ կը թեւակոխենք, երբ Անոր անունը պիտի բարձրանայ: «Եւ այն օրը պիտի ըսէք, Գոհացէք Տիրոջմէն, անոր անունը կանչեցէք, անոր զործերը ազգերուն մէջ պատմեցէք, յիշեցէք որ անոր անունը բարձր է» (Եսայեայ ԺԲ. 4): Ուստի իւրաքանչիւր արդարասէր անհատ թող «Հեթանոսներուն (ազգերուն) մէջ ըսէ թէ Տէրը կը թաղաւորէ. աշխարհ ալ հաստատուած է որպէս զի չսասանի. անիկա պիտի դատէ Ժողովուրդները ուղղութիւնով»— Սաղմ. 12. 10:

Ոնդիրը նկատի առնող ամէն անհատի ցարդ յայտնի եղած պէտք է ըլլայ՝ թէ Քրիստոսի թագաւորութեան եւ անոր ճշմարտութեան գիտութեանը հանդէպ ցոյց տրուած ամէն հակառակութիւն Հակաքրիստոսէն է: Մարդիկ այժմ պարտին Եհովայի ու Անոր Քրիստոսին կողմը անցնիլ եւ Աստուծոյ Ոսօքը ուսումնասիրելով ճշմարտութեան հետամուտ ըլլալ, որպէս զի ուղիղ ճամբուն տեղեկանալով անոր մէջէն ընթանան եւ յաւիտեան վայելեն Տիրոջը օրհնութիւնները:



### ՈԳԵ ՀԱՐՑՈՒԹԻՒՆԸ ՍԱՏԱՆԱՅՍԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՍ ՄԸՆ Է

Համաշխարհային Մեծ Պատերազմէն, Ինֆլուէնցայէն եւ տեղահանութիւններէն ի վեր՝ ոգեհարցութեան, վհուկութեան, տեսիլներու, եւայլլնի միջոցաւ՝ չար հրեշտակները թէ՛ Հայոց եւ թէ բոլոր ազգաց մէջ գրեթէ անթիւ ու անտանելի տառապանքներ բերած են:

Վերոյիշեալ սատանայական արուեստներուն կեղծիքը, եւ ատոնց ծուղակներէն ազատելու միակ ճամբան ցոյց տրուած է՝ մեր «ՈԳԵ ՀԱՐՑՈՒԹԻՒՆԸ ՍԱՏԱՆԱՅՍԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՍ ՄԸՆ Է» 64 էջոց գըրքոյկին մէջ: Ամէն խոհուն Հայ պէտք է որ կարգայայտ գրքոյկը, եթէ կ'ուզէ դտնել իր շատ մը ցաւերուն իրական դարմանը: Գինն է 10 սէնթ:

ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ.— Անթխտելի ապացոյցներով ցոյց տրուած է թէ՛ ներկայ կաշառակեր եւ անարդար կառավարութիւններուն վերջին օրերուն մէջն է որ կ'ապրինք: 64 էջոց. գինն է 10 սէնթ:

ԱՍՏՈՒԾՈՅ ՔՆԱՐԸ.— Այս 384 էջոց հատորին մէջ ցոյց տրուած է տառապող մարդկութիւնը երջանկացնող միակ յոյսը: Գինն է 35 սէնթ:

ԱՍՏՈՒԾՈՅ ԾՐԱԳԻՐԸ.— Խիստ պատուական հատոր մը: Լաթակազմ, 532 էջոց. գինն է 35 սէնթ:

ՈՒՐ ԵՆ ՄԵՌԵԱԼԵՆԵՐԸ.— 64 էջոց. գին 10փ:

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԴՐՕՇԱԿԸ.— Էջ 64. գին 10փ:

Նամակ կամ դրամ ղրկուելու է ԴԻՏԱՐԱՆ-ի անուան եւ հասցէին, որ հետեւեալն է՝

THE TIDARAN  
117 Adams Street, Brooklyn, N. Y., U. S. A.

# ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

--Մօտ ատենէն լոյս պիտի տեսնէ--



Գրեթէ 450 էջոց  
լաթակազմ հատոր մը  
որ կը պարունակէ  
այն աղատութեան  
պատգամը, որուն  
համար բազմաչար-  
չար Հայութիւնը դա-  
րերէ ի վեր արին թա-  
փած է, բայց զեռ չէ  
կրցած ձեռք ձգել:

Սոյն գիրքը ոչ մի-  
այն կ'աւետէ աղատա-  
գրութիւն՝ գերինե-  
րուն, բանտարկեալ-  
ներուն, ճնշուածնե-  
րուն, բռնապետու-  
թեանց տակ խոչտան-

գուածներուն, չար ոգիներէ բռնուածներուն, կոյրե-  
րուն, հիւանդներուն, տղէտներուն, խելագարնե-  
րուն, եւ մինչեւ իսկ մեռեալներուն, հապա նաեւ  
ցոյց կուտայ ճշմարիտ աղատութիւն գտնելու  
միակ ճամբան:

Ուստի ո՛վ Հայորդի, եթէ կ'ուզես իրապէս ա-  
զատագրուիլ, հիմակուրնէ ապահովէ օրինակ մը  
զերոյ իշխալ եղակի հատորէն, որուն գինն է 50 սէնթ:

Բոլոր ապստամբները զրկուելու են ԴԻՏԱՏԱՆ-ի  
անուան եւ հասցէին, որ հետեւեալն է՝

THE TIDARAN

117 Adams Street, Brooklyn, N. Y., U. S. A.

« Ազգային գրադարան



NL0157823

